

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ ԳՆԵԼԻ

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Ե.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական դեկավար

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ակադեմիկոս Բարխուդարյան Վ. Բ.

Պաշտոնական ընդդիմախոսներ

պատմական գիտությունների դոկտոր  
Մաթևոսյան Կ. Ա.

պատմական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Հարությունյան Գ. Ս.

Առաջատար կազմակերպություն

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. մարտի 29-ին ժամը 14<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԴ-ի Նայոց պատմություն 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մաշտակ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. փետրվարի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Յ. Ղ.

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՍ ԸՆԴՐԱՍՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԹԵՍԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՍԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎՐՈՒԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Հայ միջնադարյան պատմագիտության մեջ իր ուրույն նշանակությունն ունի Բագրատունիների հայոց թագավորության ստեղծման պատմության ուսումնասիրությունը:

IX դարի վերջերին հայ ժողովրդին հաջողվեց վերականգնել իր պետական անկախությունը Բագրատունիների գլխավորությամբ: Դա ինչպես ներքին, այնպէս էլ արտաքի բարենպաստ քաղաքական պայմանների արդյունք էր: Աշոտ Ա Բագրատունու (881/883-890) կառավարման տարիներին Հայաստանի ներքին կյանքը նկատելիրեն կայունացավ: Նրան հաջողվեց համախմբել երկրի ռազմագրադարձական և տնտեսական կարողություններն ու ծերնամուխ լինել Հայաստանի պետականության վերականգնմանը: Արտաքին գործոնների շարքում դրան նպաստում էր Արաբական խալիֆայության թուլացումը:

Բագրատունիների քաջավորության պատմությունն ուսումնասիրվել է քաղաքական, տնտեսական, հոգևոր-մշակութային և ռազմական առումներով: Սակայն իշխանական տան պատմությունը և Բագրատունիների գլխավորությամբ պետականության վերականգնման ամբողջ գործընթացն առանձին ուսումնասիրության նյութ չի դարձել: Թեմայի լիարժեք ուսումնասիրությունը պահանջում է նշված ժամանակաշրջանի Հայաստանի պատմության խոր և համակողմանի ըննություն: Անհրաժեշտ է դառնում հետևել արաբական տիրապետության ներք VIII-IX դդ. Հայաստանում կատարվող ներքին տեղաշարժերին ու ներկայացնել դրանց նշանակությունը:

Արաբական խալիֆայության թուլացմանը զուգահեռ, հայ իշխանական տներն ընդարձակում էին իրենց տիրույթները: Դա կատարվում էր ինչպես հողային նոր տարածքներ ձեռք բերելու, այնպէս էլ՝ լրաց ու ի խոպան հողերը մշակելի դարձնելու միջոցով: Աստիճանաբար ձևավորվում էր ավատատիրական խոշոր հողատիրություն: Արաբական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանում գերիշտող պայմանական հողատիրությունն աստիճանաբար իր տեղը զիջում էր ժառանգականին: Դրա շնորհիվ էր նաև, որ հայ իշխանական տները, տնտեսապես կամ ռազմական առումով ուժեղանալով, ինքնուրույնանալու միտումներ էին դրսելում:

Հարյ է նշել, որ այդ ներքին տեղաշարժերը հանգիստ ու հանրարտ չին ընթանում: Դրանք մեծ փոփոխություններ էին առաջ բերում իշխանական տների կազմում: Արաբական տիրապետությունը թորակելու շրջանում շատ իշխանական տներ՝ Մամիկոնյանները, Կամսարականները, Գնունիները և այլք, իրենց նախկին ուժը կորցնելով, թուլացել և փաստորեն դրւես էին մնվել երկրի քաղաքական, տնտեսական ու ռազմական կյանքից: Իշխանական որոշ տներ, ընդհակառակը, զորեղացել էին և երկրի կյանքում կարևոր դերակատարություն ունեին: Դրանցից էին Բագրատունի, Արծրունի, Սյունյաց և Արցախի իշխանական տները:

Թեմայի լուսաբանումը ունի գիտական, քաղաքական և գիտաճանաչողական նշանակություն, հատկապես մեր օրերում, երբ թուրք-աղբյութանական պատմագիտության մեջ պատմական իրողությունների նենգափոխմամբ մերժվում է Հայոց միջնադարյան պետականության գոյությունը: Այս առումով հայագիտության համար Հայոց պետականությանը վերաբերող յուրաքանչյուր աշխատանք առանձնակի կարևորություն է ստանում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՍ ՆՊԱՏԿԱՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:** Ատենախոսության նպատակն է աղբյուրների և մասնագիտական գրականության մանրազնին ուսումնասիրությամբ պարզաբանել հետևյալ խնդիրները.

- Վեր հանել Հայաստանի քաղաքական կյանքում մինչև VIII դ. Բագրատունի տոհմի դերակատարությունը:
- Արաբա-բյուզանդական հարաբերությունների համատեքստում բացահայտել տարածաշրջանում Հայաստանի գրադեցրած տեղը:

- Քննել Արմինիա վարչական միավորի շրջանակներում Արարական խալիֆայության գերիշխանության ներքո հայ իշխանների, հոգևորականության և հասարակ բնակչության կարգավիճակի փոփոխությունները:
- Լուսաբանել Բագրատունիների մասնակցությունը VIII-IX դդ. տեղի ունեցած հակարարական ապստամբություններին:
- Պարզել 862 թ. Շիրակավանի Եկեղեցական ժողովի դիրքորոշումը հայ և հունադավան Եկեղեցիների փոխհարաբերությունների՝ մասնավորապես Եկեղեցիների միության վերաբերյալ:
- ճշգտել Բագրատունյաց թագավորության վերականգնման թվականը և այլ հարցեր:

### **ԱՍՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՅԻ ՄԵԹՈՐԱԿԱՎԱԿԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ:**

Աստենախոսությունը շարադրված է հայկական և օտար տարարնույր սկզբնադրյուրների համադիր քննության, խնդրո առարկա թեմային առնչվող գրականության, ինչպես նաև փաստերի քննական և պատմահամեմատական վերլուծության սկզբունքի կիրառմանը:

### **ԱՍՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՎՈՐՈՒՄԸ:**

Աստենախոսության հիմնական շարադրանքը ժամանակագրական առունուվ ընգրկում է VIII դ. սկզբից մինչև IX դ. վերջն ընկած ժամանակափուլը: Սակայն Բագրատունի իշխանական տան վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտություն առաջացավ անդրադարձնալ նաև Բագրատունիների ծագումնաբանության և թեմային առնչվող մի շարք այլ հարցերի քննությանը:

### **ԱՍՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԻՐԱԿԱԿԱՆ ՆԵԱՍՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Ներկայացվող ուսումնասիրությունն իր ժամանակագրական ընդգրկմանը և դիտարկվող հարցերի ամբողջությամբ իրականացվում է առաջին անգամ: Աստենախոսությունում տարարնույթ սկզբնադրյուրների և գիտական ուսումնասիրությունների վերլուծության հիմնա վրա լուսաբանվել են մինչև VIII դ. Բագրատունիների՝ Զայաստանի և հարևան Երկրների քաղաքական կյանքում ունեցած նաև նականակցությունը: Աշոտ Մսակերի (802-826), Բագրատ Բագրատունու (826-851) գործունեությունը, նշանակած ժամանակաշրջանի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերությունները՝ մասնավորապես Շիրակավանի 862 թ. Եկեղեցական ժողովը և դրա հետ անբարյուց ալերս ունեցող Կ. Պոլսի Փուտ պատրիարքի՝ Աշոտ Բագրատունուն և Զայոց կաթողիկոս Զաքարիա Զագեցուն ուղղած նամակները:

Աստենախոսության մեջ հանգանանորեն քննել ենք Զայոց թագավորության վերականգնման թվագրումը, ինչպես նաև Աշոտ Ա-ի իշխանության ներքին և արտաքին քաղաքականությունը:

Աստենախոսության մեջ արված եղակացությունները կարող են օգտագործվել հայ ժողովրդի պատմության հատուկ դասընթացներում և դասագրերում:

### **ԱՍՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՅԻ ՓՈՐՁԱՑՄԱՆ ՈՒԹՅՈՒՆԸ:**

Աստենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է Երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած 4 հոդվածներում:

**ԹԵՍՎԱՅԻ ՈՒԽՈՒԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՅԻ ԱՍՏԻճԱՆԸ (ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՎՈՒԹՅԱՅԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ):** Աստենախոսության մեջ օգտագործվել են հայկական և օտար սկզբնադրյուրներ: VII-VIII դդ. Զայաստանի քաղաքական կյանքի՝ հատկապես Արարական խալիֆայության կողմից Երկրին հասցված տնտեսական, հարկային անասելի դաժանությունների վերաբերյալ ուշագրակ վկայություններ են պահպանվել VIII դ. պատմիչ Ղևոնդի աշխատությունում<sup>1</sup>: Պատմիչն իր երկում մարդաբան

<sup>1</sup> Պատմութիւն Ղետոնդեայ Մեծի Կարդապետի Զայոց, Ս. Պետերբուրգ, 1887 (այսուհետև՝ Ղևոնդ):

անդրադառնում է հայերի հակասաբական ապստամբություններին: Այս առնչությամբ նրա աշխատությունը չափազանց արժանահավաք աղբյուր է:

IX-X դդ. Հայաստանի ու հարևան Երկրների՝ Վիրջի և Աղվանքի պատմության հիմնահարցերի լուսաբանման համար բացարձիկ նշանակություն ունի Հովհաննես Դրասիանակերտցու «Հայոց պատմութիւնը»<sup>1</sup>: Նա Բագրատունիների թագավորության քաղաքական գծի ջատագովն էր: Աստենախոսության համար չափազանց կարևոր է պատմիչի աշխատության հատկապես առաջին մասի՝ IX դ. Երկրորդ կեսն ընգրկող հատվածը, որը նա շարպերել է ոչ միայն ականատեսի, այլ շատ դեպքերում՝ ներկայացվող իրադարձությունների մասնակցի լավատեյակությամբ: Հովհաննես Դրասիանակերտցու աշխատությունը հարուստ տեղեկություններ է հաղորդում ինչպես Բագրատունիների թագավորության քաղաքական պատմության, սահմանների, տեղագրության, այնպես է՝ Երկրի սոցիալ-տնտեսական դրագության վերաբերյալ:

Աստենախոսության համար կարևոր նշանակություն ունի նաև IX-X դդ. պատմիներ Թովմա Արծրունու և Անանունի «Պատմութիւն տաճն Արծրունեաց» երկը<sup>2</sup>: Աստենախոսության համար կարևոր է աշխատության այն հատվածը, որը սկսվում է 850 թ.-ից՝ հասնելով մինչև X դ. սկիզբը: Այս ժամանակաշրջանի վերաբերյալ նրա Երկը հավաստի աղբյուր է, քանզի շարպրված է ականատես և ականջալուր հեղինակի կողմից: Պատմագիրը կանգ է առնում Կասպուրականում ծավալված Երայրասապան կրիվների վրա, նկարագրում է նաև Արծրունիների, Բագրատունիների և արաբական ամիրությունների փոխհարաբերությունները:

X-XI դդ. հայկական սկզբնաղբյուրների շարքում ուրույն նշանակություն ունի Ստեփանոս Տարոնեցի Ասորիկի աշխատությունը՝ բարկացած Երեք հատվածներից<sup>3</sup>: Աստենախոսության համար կարևորվում է Ասորիկի Երկի վերջին՝ Երրորդ հատվածը, որն ընդգրկում է Աշոտ Ա Բագրատունու կառավարումից մինչև Գագիկ Ա-ի գահակալության վերջն ընկած ժամանակափուլը: Ասորիկի Երկի Աշոտ Ա, Սմբատ Ա և Աշոտ Գ թագավորներին վերաբերող հատվածները հիմնականում քաղագրություն են՝ ընդորինակված նախորդ պատմագիրներից:

Խոնդրո առարկա թեմայի ուսումնասիրության համար կարևոր է նաև XIII դ. պատմիչ Վարդապետի «Հաւաքրումն պատմութեան»<sup>4</sup> աշխատությունը: Աստենախոսության մեջ օգտագրութել ենք սույն աղբյուրի հատկապես այն հատվածները, որոնք վերաբերում են ինչպես Հայաստանում VIII-IX դդ. հաստատված տարատեսակ արաբական ցեղերի, այնպես էլ՝ Հայաստանում և Վրաստանում հաստատված Բագրատունիների փոխհարաբերությունների ուսումնասիրությանը:

Բագրատունիների և հայոց իշխանական մյուս տների, մասնավորապես Սյունյաց իշխանների փոխհարաբերությունների վերաբերյալ չափազանց կարևոր սկզբնաղբյուր է XII-XIII դդ. պատմիչ Ստեփանոս Օրբելյանի աշխատությունը<sup>5</sup>:

Հայոց թագավորության վերականգնման առավել ամբողջական ուսումնասիրության համար օգտակար են Երեւ նաև X-XIII դդ. հայ մատենագիրների՝ Մովսես

<sup>1</sup> Հովհաննու կարողիկոսի Դրասիանակերտցույ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912 (այսուհետև՝ Հովհաննես Դրասիանակերտցի):

<sup>2</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տաճն Արծրունեաց, քննական բնագիրը, առաջարանը և ծանոթագրությունները Մ. Յ. Դարբինյան-Մելիքյանի, Ե., 2006 (այսուհետև՝ Թովմա Արծրունի և Անանուն):

<sup>3</sup> Ստեփանոսի Տարոնեցւ Ասորիկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885 (այսուհետև՝ Ասորիկ):

<sup>4</sup> Հաւաքրումն պատմութեան Վարդապայ Վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862 (այսուհետև՝ Վարդապայ Վարդապետ):

<sup>5</sup> Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910 (այսուհետև՝ Ստեփանոս Օրբելյան):

Կաղամկատվացու<sup>1</sup>, Սամվել Անեցու<sup>2</sup>, Կիրակոս Գանձակեցու<sup>3</sup> և Միհիթար Այրիվանեցու<sup>4</sup> աշխատությունները:

Օգտվել ենք նաև վաղ միջնադարյան հայ պատմիչների՝ Ազարանգեղոսի<sup>5</sup>, Փավստոս Բուլգանի<sup>6</sup>, Սովորեցնացու<sup>7</sup>, Ղազար Փարպեցու<sup>8</sup>, Մեթոսի<sup>9</sup> աշխատություններից, որոնք այս կամ այն չափով լրացնում են քննվող հարցերի պատմությունը:

Հայոց թագավորության վերականգնման ուսումնասիրության համար չափազանց կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեն հայերեն ձեռագրերի հիշատակարանները<sup>10</sup>: Դրանց միջոցով ճշգրտվել են քննվող թեմային առնվազագույն հարցերը ինչպիսի կարևորագույն հարցեր ինչպիսիք են՝ Աշոտ Ա Բագրատունու գահակալման և Հայոց թագավորության վերականգնման ըվագրումը:

Օտար աղբյուրներից ատենախոսության շարադրման համար մեծ նշանակություն ունեն արարական աղբյուրները, որոնք բննության ենթակա ժամանակաշրջանի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են հաղորդում։ Արարական աղբյուրներն առանձին դեպքերում օգտագործել ենք արարելեն բնագրերից<sup>11</sup>, իսկ իհմնականում դրանց ծանոթացել ենք Ն. Ա. Կարառուպի, Բ. Խալաթյանցի, Դ. Նալբանդյանի, Ա. Տեր-Ղևոնյանի կատարած բարգնանությունների միջոցով<sup>12</sup>:

<sup>1</sup> Սովոր Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուամից աշխարհի, քննական բնագիրը և Ծեռացնելուն Վ. Արարեւանի. Ե., 1983:

Հայութեական բարեկարգութեան մասին օրենքը՝ 2011:

Հիմնայի օպերատոր է Արմենստել, բնակչության զավածքը՝ 5, հայտնաբերական, թ., 2011:

<sup>4</sup> Միհեառայ Վոհվանեցւու Պատմութեան Յալու Մովկուա. 1860:

<sup>5</sup> Ազաթանգի պատմութեան Յալու, Թիֆլիս, 1914:

<sup>6</sup>Փաստառոսի Բնականություն Պատմութեան Յանց. Թիֆլ. 1912 (այսուհետք՝ Փաստառոսի Բնականություն):

<sup>7</sup> Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եղիշե, 1972 (այսուհետ Գագագիւն Իշխանություն)։

<sup>8</sup> Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց եւ բուլղար առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տեղ-Ալյուտէան և Ալի Մահանանան Տիգրիս, 1904 (ապրիլին՝ Ղազար Փարպեցի):

Պատմութեան Ալեքսանդր Տիգրանի 1984 (այսուհետաձև աշխարհագույն պատմութեան առաջնահարցը) և Արքայական Եկաղեցու պատմութեան առաջնահարցը՝ Ալեքսանդր Տիգրանի 1979 (այսուհետաձև Ալեքսանդր Տիգրանի պատմութեան առաջնահարցը)։

<sup>10</sup> Մայր ցուցակ հայերն Շեռագրան Մատենադարանին Մխիթարեանց ի Վեճուղի, հ. Եկրորդ, յօրինեց Յ. Բարսեղ Վ. Սարգսիսեան, 1924, Յովսէիսեան Գ., Յշատակարանը ծեռագրաց, հ. Ա (Եղափակ մինչեւ 1250 թ.), Անրիիսա, 1951, Հայերն ծեռագրերի հիշատակարաններ, Ե-ՁԲ Դարեր, աշխատահիլությանք Ա. Սարկոսյանի, Ե., 1988 (այսուհետև՝ Հայերն ծեռագրերի հիշատակարան Ե-ՁԲ ուրեմ):

<sup>11</sup>أبي جعفر محمد بن جعفر الطبرى، تاريخ الطبرى (تاریخ الرسل والملوک لابي جعفر محمد بن جعفر التبّري 310-223)، الجزء الثاني، القاهرة، 1975 ، جمال الدين ابي الحامس يوسف بن تعرى بردى الاتاكى، التحوم الزاهرا في ملوك مصر والقاهرة، الجزء الثالث، الطبعة الاولى، بيروت - لبنان، 1992 . عبد الرحمن بن خلدون. تاريخ ابن خلدون. الجزء الثالث. بيروت - لبنان. 2000 .

<sup>12</sup> Сборникъ матеріаловъ для описанія местностей и племенъ Кавказа, изданіе управління Кавказскаго ученаго округа. Тифліс, 1901, выпуск 29, 1902, выпуск 31, 1903, выпуск 32, 1908, выпуск 38, Արարացի մատենագրեր Հայաստանի մասին, հաւաքեց և թարգմանեց Բ. Խալաբեանց, Վիեննա, 1919, Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Յ. Թ. Նալբանդյան, Ե., 1965 (այսուհետև՝ Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին), Իրն ալ-Սիր, Լիակատար պատմություն (Ալ-Քամիլ ֆի-լ-Տարիի), թարգմանություն բնագիր, առաջարան և ծանոթագրություններ՝ Ա. Տեր-Ղևոնյանի, տես «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, Արարական աղբյուրներ, Բ. Ե., 1981, (այսուհետև՝ Իրն ալ-Սիր), Արար մատենագիրներ Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագիրներից թարգմանությունները՝ Ա. Տեր-Ղևոնյանի, տես «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, Արարական աղբյուրներ, Գ. Ե., 2005 (այսուհետև՝ Կարար մատենագիրներ Թ-Ժ դարեր):

Թեմայի ուսումնասիրության համար չափազանց կարևոր են նաև բյուզանդական աղբյուրները: Դրանցից առանձնակի ուշադրության է արժանի Կոստանդին Ծիրանածին «Կայսրության կարավարման մասին» երկը<sup>1</sup>: Բյուզանդական այդ աղբյուրում տեղ գտած հիշատակությունները լուս են սփռում ինչպես հայ-բյուզանդական հարաբերությունների, այնպես էլ՝ Հայաստանում հաստատված արաբական ամիրությունների՝ Աշոտ Ա Բագրատունու նկատմամբ ունեցած ենթակայության հիմնահարցերի վրա: Հայ-բյուզանդական հարաբերությունների ուսումնասիրության համար օգտակար է նաև թեոփանես Խոստովանողի<sup>2</sup> աշխատությունը:

Աստեղախոսության շարադրմանը նպաստել են նաև վրացական աղբյուրները՝ «Քարթիլի նատյանը»<sup>3</sup>, Սմբատ Դավիթի մատուցությունը<sup>4</sup> և Վախուչի Բագրատիոնի «Վրաց թագավորության պատմությունը»<sup>5</sup>: Դրանք կարևոր են Բագրատունյաց թագավորության և նրան ենթակա Վիրքի ու Աղվանքի պատմության՝ մասնավորապես՝ Վրաստանում հաստատված Բագրատունիների, Բագրատունյաց Հայաստանի հշխանների հետ նրանց փոխարարերությունների ուսումնասիրության համար:

Հայագիտության մեջ մեզ հետաքրքրող հիմնահարցի վերաբերյալ կան բավականաշափ ուսումնասիրություններ:

Միջնադարյան Հայաստանի և նախորդ շրջանի քաղաքական պատմությունը համակարգված շարադրմանը ներկայացրել է Ս. Զամյանն իր «Հայոց պատմություն» եռահատոր աշխատության երկրորդ հատորում<sup>6</sup>: Ս. Զամյանի ծառայությունն այն է, որ նա տվյալ հարցերը լուսաբանելիս օգտագործել է ոչ միայն հայ հեղինակների, այլև՝ բյուզանդացի մատենագիրների գործերը:

Բագրատունիների թագավորության ստեղծման պատմությանը անդրադարձել է Լեռն (Առաքել Բարձսանյան)<sup>7</sup>: Սակայն հեղինակը Բագրատունիների Հայոց թագավորությունը դիտում է սոսկ որպես «Գավառական անկախություն»: Պետք է նշել, որ Լեռի գրքում հանդիպակի ուռնացված է ավատական կազմավորումների կենտրոնախույս ձգտումների նշանակությունը:

Հայաստանի և Վրաստանում հաստատված Բագրատունյաց ճյուղագրության ուսումնասիրության համար անգնահատելի նշանակություն ունեն Յ. Մարկվարտի մեմագրությունները<sup>8</sup>. Կարևոր է նաև հեղինակի օտարալեզու աշխատությունը<sup>1</sup>:

<sup>1</sup> Կոստանդին Ծիրանածին, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Յ. Բարթիկյանի, տես «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ. Ե., 1970 (այսուհետև՝ Կոստանդին Ծիրանածին):

<sup>2</sup> Թեոփանես Խոստովանող, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Յ., Բարթիկյանի, տես՝ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 13: Բյուզանդական աղբյուրներ Դ. Ե., 1983:

<sup>3</sup> Կարլիս Շխօրեბա, Իстория Грузии, История и венецианская, под. ред. Р. Метревели, Тбилиси, 2008 (այսուհետև՝ Կարլիս Շխօրեბա), տես՝ նաև «Վրաց աղբյուրները Հայաստանի յեզ հայերի մասին», թաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ. Ներածություն-ծանոթություններով յեզ հավելվածներով Լ. Մելիքսեթ-Բեկի, հ. Ա, (Ե-ԺԲ դար), Ֆեր., 1934 (այսուհետև՝ Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին):

<sup>4</sup> Ըստ Դավիթ-Ճ-ձե, Իстория и повествование о Багратионах, пер., введение и примечания М. Д. Лордкипаниձե, Տбилиси, 1979.

<sup>5</sup> Վախուլի Բագրatiոնi, Իстория царства Грузинского, перевел, снабдил предисловием, словарями и указателем Н. Накашидзе, Тбилиси, 1976 (այսուհետև՝ Վախուլի Բագրatiոնi).

<sup>6</sup> Զամյան Ս. Հայոց պատմություն (անգրից մինչև 1784 թ.), հ. Բ. Ե., 1984:

<sup>7</sup> Լեռ, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1967:

<sup>8</sup> Հայ Բագրատունեաց ճիշդագրութիւնը, ծանօթութիւններով, գրեց պյուֆ. դկտ. Յ. Մարկուարտ, գերմաներներ թարգմանեց Յ. Ս. Հապօքեան, Վիեննա, 1913, նույնի՝ Վրական Բագրատունեաց ծագումը, գերմաներներ թարգմանեց Յ. Ս. Հապօքեան, Վիեննա, 1913:

Բագրատունյաց թագավորության պատմության ուսումնասիրության բնագավառուն կարեղոր նշանակություն ունեն Ն. Աղոնցի կորողային աշխատությունները<sup>2</sup>: Դրանք նվիրված են ոչ միայն Բագրատունիների թաղաքական պատմության ուսումնասիրությանը, այլև՝ ծագումնաբանությանը, քննվող ժամանակաշրջանի հայ նախարարների և բնակչության՝ դեպի Բյուզանդիա արտագաղթին, այնտեղ հաստատվելուն, Հայաստանի, Վիրոջի և Աղվանիքի Բագրատունիների փոխհարաբերությունների ուսումնասիրությանը:

Խալիֆայությանը Հայաստանի բռնակցման, արաբների դեմ հայ ժողովրդի մղած համար պայքարի, Հայաստանի՝ նշված ժամանակաշրջանի թաղաքական, սոցիալ-տնտեսական և ճշակության կյանքին առնվզող հարցերի ուսումնասիրության համար կարենորում ենք Յ. Հարությունյանի՝ «Հայաստանն Արաբական խալիֆաթի տիրապետության ժամանակ (640-856)»<sup>3</sup> և «Հայաստանը IX-XI դարերում»<sup>4</sup> մենագրությունները:

Բագրատունյաց Հայաստանի թաղաքական պատմությանը վերաբերող մի շարք հարցեր ներկայացվել են Մ. Ղազարյանի<sup>5</sup>, Ժ. Լորանի<sup>6</sup>, Ռ. Գրուսեի<sup>7</sup>, Կ. Թումանյանի<sup>8</sup> աշխատավորություններում:

Բագրատունյաց Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության լուսաբանությանը են նշիրված Վ. Բարխուդարյանի<sup>9</sup>, Ս. Պողոսյանի<sup>10</sup>, Վ. Արքահամյանի<sup>11</sup> ուսումնասիրությունները:

Հայաստանի VII-IX դդ. պատմության՝ մասնավորապես Բագրատունյաց թագավորության և Արաբական խալիֆայության փոխհարաբերությունների ուսումնասիրությանը է նշիրված Ա. Տեր-Ղևոնյանի աշխատությունը<sup>12</sup>:

Վերոհիշյալ ժամանակաշրջանի թաղաքական, սոցիալ-տնտեսական հարցերի ուսումնասիրության համար կարենոր է նաև Ս. Մելիք-Բախչյանի աշխատությունը<sup>13</sup>:

<sup>1</sup> Markwart J., Südarmenien und Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930.

<sup>2</sup> Աղոնց Ն., Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, նույնի՝ Հայաստանը Հուստինիանոսի դարաշօջանում, թաղաքական կացությունը ըստ նախարարական կազմերի, Ե., 1987, նոյնի՝ Երևան, հ., Ա, Ե., 2006:

<sup>3</sup> Հարությունյան Յ., Հայաստանն Արաբական խալիֆաթի տիրապետության ժամանակ (640-856), Ե., 1946 (այսուհետև՝ Հարությունյան Յ., Հայաստանն Արաբական խալիֆաթի տիրապետության ժամանակ):

<sup>4</sup> Հարությունյան Յ., Հայաստանը IX-XI դարերում, Ե., 1959:

<sup>5</sup> Ghazarian M., Armenien unter der arabischen Herrschaft bis zur Entstehung des Bagratidenreiches, Marburg, 1903.

<sup>6</sup> Laurent J., L'Arménie entre Byzance et l'Islam, depuis la conquête arabe jusqu'en 886, nouvelle édition par M. Canard, Lisbonne, 1980 (այսուհետև՝ Laurent J., L'Arménie entre Byzance).

<sup>7</sup> Grousset R., Histoire de l'Arménie des origines à 1071, Paris, 1947 (այսուհետև՝ Grousset R., Histoire de l'Arménie).

<sup>8</sup> Toumanoff C., Studies in Christian Caucasian history, Georgetown, 1963.

<sup>9</sup> Բարխուդարյան Վ., Ֆեղովական հողատիրությունը Հայաստանում 9-11-րդ դարերում, պատմական գիտությունների թեմածովի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Ե., 1954 (այսուհետև՝ Բարխուդարյան Վ., Ֆեղովական հողատիրությունը Հայաստանում 9-11-րդ դարերում), տես նաև Բարխուդարյան Վ., Ֆեղալյան զемլեվладение в Армении в IX-XI веках, автореферат диссертации, на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1954.

<sup>10</sup> Պողոսյան Ս., Գյուղացիների ծրտացումը և գյուղացիական շարժմաները Հայաստանում IX-XIII դդ., Ե., 1956:

<sup>11</sup> Արքահամյան Վ., Վրեսամեթը Հայաստանում IV-XVIII դարերում, Ե., 1956:

<sup>12</sup> Տեր-Գևորգյան Ա., Արմենիա և Արաբական խալիֆաթ, Երևան, 1977. Բագրատունյաց թագավորության մի շարք հարցեր հանգամանալից ուսումնասիրության են ներարկվել հեղինակի տարրեր հոդվածներում: Այդ մասին մանրամասն տես Տեր-Ղևոնյան Ա., Հոդվածների ժողովածու, Ե., 2003:

Բագրատունյաց Հայաստանի քաղաքական պատմության՝ մասնավորապես IX-X դդ. հայ-բյուզանդական հարաբերությունների ուսումնասիրության համար ուրույն նշանակություն ունի Կ. Յուրաքաչյանի մենագրությունը<sup>2</sup>:

Ո. Մաքլուսյանն իր մենագրությունում բննել է Բագրատունյաց թագավորության IX-X դդ. պետական կառուցվածքն ու կառավարման համակարգը և միջավատատիրական հարաբերությունների հիմնահարցերը<sup>3</sup>: Բագրատունիների պատմության լուսաբանության համար կարուրվում է նաև հեղինակի «Բագրատունիներ պատմատիրական համարագիտարարաց»<sup>4</sup> մենագրությունը:

Արաբական ամիրությունների և VII-IX դդ. Հայաստանում Արաբական խալիֆայության վարած վարչական քաղաքականության պատմության ուսումնասիրությանն է նվիրված Ս. Ծեպյանի ատենախոսությունը:<sup>5</sup>

Վերոհիշյալ հարցերի՝ մասնավորապես՝ Հայաստանում Արաբական խալիֆայության վարած հարկային քաղաքականության ուսումնասիրության համար արժեքավոր է Հ. Նալբանդյանի ատենախոսությունը:<sup>6</sup>

Հայաստանում հաստատված արաբական ամիրությունների առաջացման նախադրյալների, սոցիալ-տնտեսական կյանքի, նրանց հետ Բագրատունիների փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրության բնագավառում առանձնահատուկ նշանակություն ունի Ա. Տեր-Ղևոնյանի «Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում» աշխատությունը<sup>7</sup>:

Բագրատունյաց թագավորության առանձին իշխանությունների վերաբերյալ ուշագրավ են հետևյալ ուսումնասիրությունները:

Սյունիքի իշխանական տան քաղաքական, սոցիալ-տնտեսական պատմության հարցերի լուսաբանմանն է նվիրված Հ. Ութմազյանի «Սյունիքը IX-X դարերում» աշխատությունը<sup>8</sup>:

Վ. Կարդանյանի կողմից հանգանանից ուսումնասիրվել են Կասպուրականի քաղավորության ստեղծումը, կառավարման համակարգը, քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքը, ինչպես նաև Բագրատունիների ու Սյունիքի իշխանների հետ Կասպուրականի Արքունիքների փոխհարաբերությունները<sup>9</sup>:

Տարոնի Բագրատունիների իշխանական տան պատմության պատմաշխարհագրական, քաղաքական, սոցիալ-տնտեսական հարցերի, հարկան իշխանությունների, Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության փոխհարաբերությունների ուսումնասիրությանն է նվիրված Գ. Գրիգորյանի մենագրությունը<sup>10</sup>:

<sup>1</sup> Մելիք-Բախչյան Ս., Հայաստանը VII-IX դարերում, Ե., 1968:

<sup>2</sup> Խօնակյան Կ., Արմանական պատմության մասնակիության առաջացման պատմաշխարհագրական առանձնահատուկ առանձինության մասին, Մասնակիության առանձնահատուկ առանձինության մասին, Երևան, 1988:

<sup>3</sup> Մաքլուսյան Ո., Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Ե., 1990:

<sup>4</sup> Մաքլուսյան Ո., Բագրատունիներ պատմա-տոհմաբանական հանրագիտարան, Ե., 1997:

<sup>5</sup> Ծեպյան Ս., Արաբական խալիֆայի վարչական քաղաքականությունը Հայաստանում (7-9-րդ դդ.), պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման առաջնահատությունը, Ե., 1954:

<sup>6</sup> Նալբանդյան Հ., Արաբների վարչական և հարկային քաղաքականությունը Հայաստանում (8-րդ դարի սկզբից մինչև 9-րդ դարի կեսը), պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման առաջնահատությունը, Ե., 1950:

<sup>7</sup> Տեր-Ղևոնյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Ե., 1965:

<sup>8</sup> Ութմազյան Հ., Սյունիքը IX-X դարերում, Ե., 1958:

<sup>9</sup> Կարդանյան Վ., Կասպուրականի Արքունիքաց Հայաստանում (908-1021 թթ.), Ե., 1969, նույնի՝ Արքունիքները հայոց պատմության մեջ Ե., 2002:

<sup>10</sup> Գրիգորյան Գ., Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը, IX-X դարերում, Ե., 1983:

Կախեթի իշխանության ձևավորման, քաղաքական դրության, ինչպես նաև Կախեթի իշխանների և Բագրատունների փոխհարաբերությունների պատմության առնչվող մի շարք հարցեր քննության են Ենթարկված Հ. Ակրտումյանի մենագրության մեջ:

Բագրատունյաց իշխանական տոհմի և թագավորության պատմության ուսումնասիրության բնագավառում իրենց նպաստն են բերել սփյուռքահայ պատմաբանները: Նրանցից աշանձնանում են, Ն. Ակինյանի<sup>2</sup>, Ա. Սարուխանի<sup>3</sup>, Գ. Գյուղայանի<sup>4</sup> և Հ. Տեր-Մելքոնյանի<sup>5</sup> ուսումնասիրությունները:

Բագրատունների թագավորության թաղաքական, պատմության ուսումնասիրության համար խստ կարևոր են Հ. Մանանյանի,<sup>6</sup> Բ. Առաքելյանի<sup>7</sup> և Հ. Բարթիկյանի<sup>8</sup> ուսումնասիրությունները: Ինչպես հայ-բյուզանդական հարաբերությունների, այնպես էլ քննվող ժամանակաշրջանի հոգևոր-եկեղեցական հարաբերությունների ուսումնասիրության համար անգնահատելի է Հ. Բարթիկյանի կատարած ստվարածավալ աշխատանքը:

Բագրատունյաց թագավորության պատմության են Վերաբերում Ա. Եղիազարյանի<sup>9</sup> և Կ. Ուկանյանի<sup>10</sup> ուսումնասիրությունները:

Ուսումնասիրվող թեմայի մշակմանը նպաստել են նաև Ս. Երեմյանի<sup>11</sup>, Կ. Յուզբաշյանի<sup>12</sup>, Բ. Ջարությունյանի<sup>13</sup>, Է. Դանիելյանի<sup>1</sup> և այլ ուսումնասիրողների կատարած ուսումնասիրությունները:

<sup>1</sup> Մկրտумյան Ղ., Грузинское феодальное княжество Кахети в VIII-XI вв. и его взаимоотношения с Арменией, Ереван, 1983. (այսուհետև՝ Մկրտумյան Ղ, Ծավ. աշխ.).

<sup>2</sup> Ակինյան Ն., Ղայ Բագրատուններու տոհմածարը (450-850), Մատենագրական հետազոտություններ, քննութիւն և բնագիր, հ. Գ, Վիեննա, 1930, էջ 295-331: Ալենախոսությունում մի շարք հարցերի ուսումնասիրության համար օգտակար են Եղիշ Զավարյան Ա. Ակինյանի՝ «Թեղողորոս Ապիկուռա և Նանա Ասորի Ղայաստանի նկատմամբ Եղիշ Զավարյանուն Սելինութեան հայերեն թարգմանութիւնը», Մատենագրական հետազոտություններ, քննութիւն և բնագիր, հ. Ա, Վիեննա, 1922, էջ 116-163, նույնի՝ Ղետոնդ Եղիշ Եղիշ Զավարյանուն Սելինութեան, Մատենագրական հետազոտություններ, քննութիւն և բնագիր, հ. Գ, Վիեննա, 1930, էջ 127-291 աշխատությունները:

<sup>3</sup> Սարուխան Ա., Բագրատուննեաց արքայական հարասութիւնը Վրաստանում, Ղանդէս ամսօրեայ, Վիեննա, 1939, թիվ 7-12, այսուակ 237-254:

<sup>4</sup> Գիւղալեան Գ., Ղայաստանի պատմութեան շրջանները, Պէյրութ, 1946:

<sup>5</sup> Տեր Մելքոնեան Յ., Բագրատունի Երկու Մարատներ. իրենց ժամանակաշրջանը եւ յարակից խնդիրներ (Զ-է դար), Պէյրութ, 1960:

<sup>6</sup> Մանանյան Յ., Երկեր, հ. Ա., 1977, հ. Բ, Ե., 1978, նույնի՝ О торговле и городах Армении в связи с морской торговлей древних времен (V в. до н. эры-XV в. н. эры), Ереван, 1954.

<sup>7</sup> Առաքելյան Բ., Քաղաքներ և արեստաններ Ղայաստանում IX-XIII դդ., հ. Ի, Ե., 1958:

<sup>8</sup> Բարթիկյան Հ., Ղայ-բյուզանդական հետազոտություններ, հայերեն հոդվածներ, հ. Ա, Ե., 2002, նույնի՝ հ. Բ, հոդվածներ օսուար լեզուներով, Ե., 2002:

<sup>9</sup> Եղիազարյան Ա., Արարական Խալիֆայության Արմինիա վարչական շրջանը (պատմաշխարհագրական ուսումնասիրություն), Ե., 2010, նույնի՝ Ղայ-Բագրատունների տերությունը (885-908 թթ) (պատմաշխարհագրական ուսումնասիրություն), Ե., 2011 (այսուհետև՝ Եղիազարյան Ա., Ղայ-Բագրատունների տերությունը):

<sup>10</sup> Ուկանյան Կ., Ղայոց բանակը Բագրատունյաց շրջանում, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման աստենախոսություն, Ե., 2010:

<sup>11</sup> Երեմյան Ս., Ղայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, նույնի՝ Օբնություն սудеб и культурно-политическое содружество народов Закавказья в IX-XIII вв., «Кавказ и Византия», выпуск I, Ереван, 1979, с. 5-9, նույնի՝ Լիպարիտ գրավարը և նրա նախորդները, Արածանատիկ Ս. Մատենագրական կարինետի «Աշխաստությունների», Ե., 1947, N 2-ից, էջ 103-149 և այլն:

<sup>12</sup> Յուզբաշյան Կ., «Բագրատունյաց շրջանի» Ղայաստանը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից, ՊԲՀ, 1975, N 1, էջ 33-53:

<sup>13</sup> Ջարությունյան Բ., Մեծ Ղայի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 2001:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴՎԿՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը քաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և օգտագործված աղբուրների ու գրականության ցամկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմուն է համակազչային շարվածքի 175 էջ:

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորոյթը, հիմնավորված են հետազոտության ժամանակագրական սահմանները, տրվել է հիմնախնդրին վերաբերող սկզբանադրությունների ու գրականության տեսությունը:

**Առաջին գլուխ՝ «Բագրատունիները մինչև արարական ժամանակաշրջանը» բաղկացած է երկու ենթագլխից:**

Առաջին ենթագլխում՝ «Բագրատունյաց նախարարական տոհմի ծագումը», աճիով կերպով ներկայացված է Բագրատունիների ծագումնաբանությանը վերաբերող ինչպես աղյուրագիտական, այնպես էլ մինչև այժմ կատարված գիտական ուսումնավորությունների արդյունքները: Իշխանական տաճ ծագումնաբանության վերաբերյալ կատարված ուսումնավորությունը թույլ է տալիս պնդելու, որ Բագրատունիներն ունեն բացառապես հայկական ծագում:

Երկրորդ ենթագլխում՝ «Բագրատունյաց նախարարական տոհմը մինչև VIII դարը», քննվել է հայ հին և վաղ միջնադարյան քաղաքական պատմության մեջ Բագրատունիների ունեցած նշանակալի դերակատարությունը, որն ընդգրկում էր պետության կառավարման համակարգի բոլոր բնագավառները: Իշխանական տաճ անդամները դեռևս Ք. ա. II դ. իշխատակվում են իրեն թագաղիներ<sup>2</sup>, IV դ. ասպետներ<sup>3</sup>, իսկ V դ. սկսած՝ մարզպաններ<sup>4</sup>: Բագրատունիները VI դ. հանդես եկան հակապարսկական և հակապարտական ապահովությունների կազմակերպիչների դերում<sup>5</sup>: Իշխանական տաճ անդամների քաղաքական վերելքն առավել նկատելի դարձավ VII դ., երբ նրանք սկսեցին զբաղեցնել Հայոց իշխանի պաշտոնը<sup>6</sup>:

Երկրորդ գլուխ՝ «Դայաստանի քաղաքական ու վարչատնօնական դրությունը (VIII- IX դարի առաջին քառորդ)», բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Դայաստանի քաղաքական կացությունն արարական տիրապետության սկզբանշրջանում», ներկայացված է Դայաստանում Արարական տիրապետության հաստատումը և Արմինիայի շրջանակներում Դայաստանի քաղաքական կացությունը:

Արմինիայի կազմում Դայաստանն իր ունեցած ինչպես տարածքային, մարդկային ու նյութական, այնպես էլ՝ քաղաքական, տնտեսական հոգևոր ու մշակութային ռեսուրսների գերակայությամբ և բարենպաստ աշխարհագրական դիրքով ռազմական պատվարի դեր էր կատարում Բյուզանդական կայսրության ու Արարական խալիֆայության համար:

<sup>1</sup> Դամիեյան Է., Մանագկերտը բյուզանդա-արարական հակամարտության ոլորտում (IX դարի երկրորդ կես-Х դար), ՊԲՀ, 1977, N 1, էջ 153-167, նույնի՝ Տարոնը հայ-բյուզանդական հարաբերություններում (IX դարի երկրորդ կես-Х դար), ՊԲՀ, 1978, N 1, էջ 125-140, տես նաև Դամիեյան Է., Հայոց եկեղեցու նկատմամբ Խոսրով Փարվեզի վարած քաղաքականությունը, ՊԲՀ, 1981, N 4, էջ 195-200, Դամիեյան Է., Բագրատունիների հաստատումը Տարոնում և Արշարունիքում, ՊԲՀ, 1992, N 1, էջ 116-124:

<sup>2</sup> Պերիխանյան Ա., Արամեյская наядпись из Зангезура, (Некоторые вопросы среднеиранской диалектологии), ՊԲՀ, 1965, N 4, с. 110-111:

<sup>3</sup> Փավստոս Բուզանդ, էջ 27, Ղազար Փարպետի, էջ 303, 305:

<sup>4</sup> Ղազար Փարպետի, էջ 121-122, 125-126, 128-129, 133-135:

<sup>5</sup> Սեբեոս, էջ 92, Գեօֆիլակ Սմոկատտա, Իстория, перевод С. П. Кандратъева, Москва, 1957, с. 80.

<sup>6</sup> Ղևոնդ, էջ 16, Ասողիկ, 122-123:

Արաբական խալիֆայությունը մշտապես իր ուշադրության կենտրոնում էր պահում Հայաստանը: Նրա քաղաքականության կարևորագույն խնդիրներից էր ցանկացած միջոցով՝ նույնիսկ որոշակի զիջումներ կատարելով, խոչընդոտել հայ իշխանների «բյուզանդանություն» տրամադրությունները: Արմինիայի կառավարչի կողքին Հայոց իշխանի ինստիտուտի առկայությունը, նրա ունեցած գործառույթների օրբստորեն դիմարձակումը, Խալիֆայության կողմից Հայոց Եկեղեցու, նախարարների ժառանգական հողատիրության ճանաչումը, հարկային քաղաքականության բնագավառում տեղեւ ունեցող դրական տեղաշարժերը, փաստում են վերոնշյալը:

**Երկրորդ Ենթագլխում՝ «Բագրատունյաց նախարարական տոհմը VIII դ. սկզբից մինչև VIII դ. Վերջին քառորդը»,** քննության է առնված VIII դ. հակառարաբական ապստամբություններին Բագրատունիների մասնակցությունը: Թեպետ, հաճախ դրանց կազմակերպիչները Մամիկոնյան իշխանական տաճ ներկայացնեցներ էին, ովքեր ի տարբերություն Բագրատունիների, հակված էին Խալիֆայության հետ առավել կոշտ քաղաքականություն Վարելուն, Բագրատունիներս առավել հեռագնն՝ Հայոց պետականությունը Վերականգնելու միտումներ ունենալով, փորձում էին նախ և առաջ արաբների հետ առաջացած հակասությունները հարթել խաղաղ ճանապարհով: Այդ էր պատճառը, որ իշխանական տունն իրեւ ապստամբության կազմակերպիչ, իր տեղը գիտեց Սամիկոնյաններին: Սակայն, քաղաքական դեպքերի թերարանքը, հարկ եղած դեպքում նրանց ուղղորդում էր հակառարաբական ապստամբությունների կիզակետ:

**Երրորդ Ենթագլխում՝ «Իրադրությունը Հայաստանում VIII դարի Վերջին քառորդում»,** առավել հանգանանալից հետազոտության են Ենթարկվել Հայաստանում 774-775 թթ. ապստամբությունից հետո տեղի ունեցող ներքին տեղաշարժերը, որոնք հանգիստ ու հանդարտ չէին ընթանում: Դրանք մեծ փոփոխություններ էին առաջ բերում իշխանական տների կազմում: Նրանցից շատերը՝ Մամիկոնյանները, Կանսարականները, Գնունիները և այլք, կորցնելով իրենց նախկին հզորությունը, քույացել և փաստորեն դրւու էին մոլոր Հայաստանի ռազմա-քաղաքական, տնտեսական կյանքից: Դրան հակառակ, որոշ իշխանական տներ՝ Բագրատունիները, Արծորունիները, Սյունյաց և Արցախի իշխաններն, ընդհակառակը, գորեղացել էին և երկրում երևելի դերակատարություն ձեռք բերել:

**Չորրորդ Ենթագլխում «Աշոտ Սասակերի և Բագրատ Բագրատունու գործունեությունը»,** քննության է առնված Աշոտ և Բագրատ Բագրատունիների իշխանության տարիներին նրանց վարած կենտրոնամետ քաղաքականությունը: Նշված ժամանակաշրջանում Բագրատունիների ձեռքին կենտրոնացան Հայաստանի կարևորագույն՝ Հայոց իշխանի և սպարապետի պաշտոնները: Բացի այդ, Աշոտ Սասակեր Բագրատունին 802 թ. Խալիֆայությունից ստանալով Հայոց իշխանի պաշտոնը, ձեռնամոլու եղավ Բագրատունիների տիրույթների ընդարձակմանը:

Բագրատունիների տիրույթները IX դ. ընդարձակվեցին հետևյալ հերթականությամբ. Սպերին և Կոգովիսին ավելացան Արշարունիքը, Շիրակը և Տարոնը<sup>1</sup>: Ուշադրության է արժանի նաև Տայքը, որն ամենայն հավանականությամբ 790-ական թթ. արդեն պատկանում էր Բագրատունիներին: Ուստի, Աշոտ Սասակերն Արիովիսից Գնունիներին 790-ական թթ. բնակեցրել էր Տայքում: Վերոհիշյալ տարածքներից զատ, Աշոտ Սասակերի իշխանության տարիներին Մոկքը ևս պատկանում էր Բագրատունիներին<sup>2</sup>: Աշոտ Սասակերին փոխարինած Բագրատ Բագրատունին, ով կրում էր իշխանաց իշխանի տիտղոսն ակնիայտ առավել լիզորություններ ուներ իր նախորդի հանդեպ: Ներքին քաղաքական բնագավառում կարևոր էր Բագրատունիների միավորից գործունեությունը,

<sup>1</sup> Ինձիցյան Ղ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեաց աշխարհի, հ. II, Վենետիկ, 1835, էջ 102:

<sup>2</sup> Արդուն Ն., Երկեր, հ. Ա, էջ 453:

իսկ արտաքին քաղաքականության մեջ՝ արաբների վերահաս սպառնալիքները կանխելու համար Բյուզանդական կայսրության հետ համագործակությունը: Եթե ներքին քաղաքականության իրագործումը՝ Բագրատունիներին միավորելը, Յայոց իշխանաց իշխանին նաև ամսամբ հաջողվեց, ապա արտաքին քաղաքականության բնագավառում նա ձեռք բերեց ակնհայտ հաջողություններ: Արաբական խալիֆայությունից ստանալով իշխանաց իշխանի, իսկ Բյուզանդական կայսրությունից՝ կուրապաղատի տիտղոսներ, Բագրատ Բագրատունին կարողացավ սանձել արաբների նկրտումները:

Այդուհանդեռ, 851 թ. Յայաստան ժամանած Յուսուֆ ալ-Մարուազի կառավարչին (851-852) հաջողվեց ձերբակալել նրան:

Երրորդ գլուխ՝ «Դայաստանն Աշոտ Բագրատունու իշխանության շրջանում: Բագրատունյաց քագավորության հրչակումը», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Աշոտ Բագրատունին Յայաստանի կառավարիչ», հանգամանալից ուսումնասիրության է ենթարկվել Բուղա ալ-Քարիր (852-855) արշավանքից հետո Յայաստանում ստեղծված քաղաքական կացությունը, Աշոտ Բագրատունու՝ Յայոց պետականությունը վերականգնելու ուղղությամբ ձեռնարկած միավորից գործունեությունը:

Արաբական խալիֆայությունը 855 թ. Յայոց սպարապետի, իսկ 862 թթ. Յայոց իշխանաց իշխանի լիրավաստությունները համձնեց սապարապետ Սմբատ Բագրատունու որդուն՝ Աշոտին: Նրա ներքին քաղաքականության օրակարգի կարևորգույն խնդիրը երկրի կայունացումն էր: Աշոտ Բագրատունուն հաջողվում է զատել հայ իշխանների կենտրոնախույս նկրտումները՝ միաժամանակ կատարելով իր պարտավորությունները խալիֆայության նկատմամբ: Նրա իշխանությունը տարածվում էր Յայաստանի ժամանակի հղոր իշխանական տների՝ Վասպուրականի Արծրունիների և Սյունյաց գահերեց իշխանների, ինչպես նաև Աղվանների, Վիրքի և Կովկասյան որոշ ցեղերի վրա<sup>1</sup>: Այսիսով, Բագրատունիներին հաջողվեց միավորել ամբողջ Յայաստանը և հարակից երկրները<sup>2</sup>: Ավելին, հայ մյուս իշխանները ստորակայական կախման մեջ էին Բագրատունիներից:<sup>3</sup>

Աշոտ Բագրատունին կրում էր, «...գիշխանս Յայոց, գվար և զԱղուանից»<sup>4</sup> տիտղոսը: Նրան ենթակա էին նաև Յայաստանում հաստատված արաբական ամիրությունները, որոնք հարկային և ռազմական պարտավորությունների ունեին նրա նկատմամբ<sup>5</sup>:

Նշված ժամանակաշրջանում Յայոց իշխանաց իշխանը տարածաշրջանում ուներ քաղաքական լուրջ կշիռ: Խալիֆայությունը, հաշվի նստելով ստեղծված դրության հետ, լայն արտօնություններ ընձեռեց Աշոտ Բագրատունուն: Դրանցից թերևս ամենանշանակալիցը հարկերի հավաքման իրավունքն էր<sup>6</sup>, ինչը փաստում է Արմինիայի կառավարչի իրավունքների ակնհայտ սահմանափակումը: Երկրի հետագա

<sup>1</sup> Թովմա Արծրունի և Անանուն, էջ 230, Վարդան Վարդապետ, էջ 85:

<sup>2</sup> Գրեն Ա., Դինաստիա Բագրատուն վե Արմենիա, Ժурнал մինիստերստվա Նարоднаго просвещение, Шестое десятилетие, ч. CCXC, Санкт-Петербург, 1893 с. 58:

<sup>3</sup> Բարիխուդարյան Վ., Ֆեոդալական հողատիրությունը Յայաստանում 9-11-րդ դարերում, էջ 270, Պողոսյան Ս., Գյուղացիների ծորտացումը և գյուղացիական շարժումները Յայաստանում Խ-ХIII դդ., էջ 57, Մաթևոսյան Ռ., Վասալայութերենական հարաբերությունները Բագրատունյաց Յայաստանում X-XI դդ., ԼՀԳ, 1977, N 10, էջ 46-54:

<sup>4</sup> Թովմա Արծրունի և Անանուն, նոյն տեղում:

<sup>5</sup> Սոստանին Ծիրանածին, էջ 10-11, Տեր-Ղոնոնյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Յայաստանում, էջ 96-111, Laurent J., L'Arménie entre Byzance..., p. 382-397, Դանիելյան Ե., Սանագիկերտը Բյուզանդա-արաբական հականարտության ոլորտում (IX դարի երկրորդ կես-Х դար), ՊԲՀ, 1977, N 1, էջ 156:

<sup>6</sup> Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 133:

զարգացմանը և բնակչության վիճակի բարելավմանն էապես նպաստեց նաև հարկերի կրծատումը<sup>1</sup>:

Դայաստանի ռազմական անվտանգության պահանջներից ելնելով՝ Աշոտ Բագրատունին զորքի թվաքանակը հասցեց 40 հազարի՝ սպարապետի պաշտոնում նշանակելով եղբորը՝ Արասին<sup>2</sup>: Զորքի թվական աճը, որը ֆինանսական հսկայական միջոցներ էր պահանջում, անկասկած, վկայում է Երկրի տնտեսական առաջընթացի մասին, ինչը ուղղակիորեն նպաստում էր պետականության վերականգնմանը:

Դայոց իշխանաց իշխանը քաջ գտակցում էր, որ հայ նախարարների հետ և այտք է փոխահավետ հարաբերություններ հաստատել՝ միևնույն ժամանակ նրանց պահելով վերակաղողության ներք: Դրան մեծապես նպաստում էին Արծորունիների, Սյունիների հետ Բագրատունիների հաստատած խնամեական կապերը<sup>3</sup>:

Այսպիսով, Աշոտ Բագրատունու ծեռարկած միավորից քաղաքական քայլերը նախադրյալներ էին Դայոց թագավորության վերականգնման համար:

**Երկորորդ ենթագլխում՝ «Ծիրակավանի եկեղեցական ժողով»** ուսումնասիրության է ենթարկված Ծիրակավանի եկեղեցական ժողովն, ինչպես նաև նշված ժամանակաշրջանի հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները: Դանցում առանձնահատուկ տեղ է գրանցենում Դայոց կաթողիկոս Զաքարիա Ա Զագեցուն Կ. Պոտի պատրիհարք Փոտի հետք նամակը: Պատրիհարքը IX դ. Երկորորդ կեսին լծվում է հայերին «դարձի» բերելու գործին՝ փորձելով իրականություն դարձնել Դայոց և հունադավան եկեղեցիների միությունը, որի շուրջ շուտով սկսվում է նամակագրություն նրա ու Զաքարիա Ա Զագեցու միջև: Նամակագրիներն արծարծում էին Զաղկեդոնի 451 թ. ժողովի՝ Քրիստոսի միաբնակությանն ու Երկարնակությանն առնչվող հարցերը: Առանձնակի կարևորություն ունի Դայոց կաթողիկոսին պատրիհարքի հետք նամակը, որը մեզ է հասել միայն հայերեն, իսկ հունարեն բնագիրը ցարդ հայտնի չէ<sup>4</sup>: Փոտի նամակն անմիջական առնչություն ունի Ծիրակավանի եկեղեցական ժողովի հետ: Պատմագիտական գրականության մեջ ժողովի գումարնան թվականի, հրավիրման նպատակի, ինչպես նաև ժողովակիցների և Ծիրակավանում «ընդունված կանոնների» վերաբերյալ առկա են տարբեր տեսակետներ: Ժողովի թվականը փաստում է Փոտի նամակի հիշատակարանը, որտեղ այն թվագրված է 862 թ.<sup>5</sup>: Ինչ վերաբերում է Ծիրակավանի ժողովի հրավիրման նպատակին, ապա, հիմք ընդունելով Վարդան պատմիչի հայորդումն, այն համարվել է Աշոտ Ա Բագրատունուն թագավոր հռչակելը<sup>6</sup>: Մինչեւ Կ. Դակորյանի կարծիքով ժողովն առնչվել է Դայոց և հունադավան եկեղեցիների դավանաբանական հարցերին<sup>7</sup>: Այս տեսակետը պաշտպանում է նաև Պ. Անանյանը<sup>8</sup>, որը մեր կողմից լիովին ընդունելի է: Նամակը հետաքրքրական է նաև այս առումով, որ հստակ վկայություն է պարունակում Դայոց կաթողիկոսի՝ եկեղեցիների միության վերաբերյալ ունեցած ժխտողական դիրքորոշման մասին: Ավելին, հայտնի է, որ Ծիրակավանի ժողովի մասնակից Աշոտ Բագրատունին Տայքի Սահակ Մռուտ կամ

<sup>1</sup> Կուղանա, Արար մատենագիրներ Թ-ժ դարեր, էջ 552:

<sup>2</sup> Դովիաննես Դրասխանակերտոցի, էջ 135:

<sup>3</sup> Դովիաննես Դրասխանակերտոցի, էջ 135, 174, 231, Ստեփանոս Օրբելյան, էջ 169:

<sup>5</sup> Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, էջ 1069-1070, տես նաև Կահանայ Նիկիայ Եպիսկոպոսի Բանք, հրատարակութեան պատրաստեց Ն. Ակիմեանը, Դանդես ամսօրեայ, Վիեննա, 1968, թիւ 7-9, սյունակ 257-258:

<sup>6</sup> Առաքյալ Ե., Ղարի, Ի, Ռէզուլտատի քառորդ 1949-50, Երևան, 1951, ս. 85.

<sup>7</sup> Մանր ժամանակագրություններ XIII- XVIII դդ., աշխատասիրությամբ Վ. Դակորյանի, հ. II, Ե., 1956, էջ 160:

<sup>8</sup> Անանեան Պ., Փոտ Պատրիհարքի թղթակցութիւնը Դայոց հետ, Բազմավեա, Վենետիկ, 1989, թիւ 1-4, էջ 38:

Ապիկուրեց վարդապետի միջոցով պատասխանել է Փոտի նամակին: Վարդապետը չնյայած հավաստիացնում էր Աշոտ Բագրատունու նվիրվածությունը Կայսրությանը, սակայն, շարունակում էր ժխտել Քաղկեդոնի ժողովի օրինական լինելը<sup>1</sup>:

Երրորդ ենթակառում՝ «Դայ-վիրա-աբժանական հարաբերությունները IX դարում», քննության նյութ է դարձել Բագրատունիների նասնակցությունը Վիրքում տեղի ունեցող ռազմական գործողություններին:

Վիրքի նկատմար Աշոտ Բագրատունու և արխագների թագավոր Գեորգի I-ի (861-868) քաղաքական շահերը բախվեցին՝ վերածննդով ռազմական հակամարտության<sup>2</sup>: Պայքարն ընթանում էր տարածաշրջանում գերիշխող դիրք գրավելու համար<sup>3</sup>:

Այդ առնչությամբ Կրաստանի ռազմա-քաղաքական վերնախավը բաժանվեց երկու հակադիր թիվ: Կղարքի իշխան Աշոտ կուրապաղատի որդի Բագրատուր, նրա որդին՝ Կղարքի կուրապաղատ Դավիթը, Թռեղուում աճրացած Լիպարիտ Վախուշտը, ինչպես նաև Վրաստանում հաստատված արաբները սատարում էին Աշոտ Բագրատունուն, իսկ Բագրատի եղբայր Գուարամը, նրա որդին՝ Նասրան և Գուրգենը, ով Աշոտ կուրապաղատի թոռն էր՝ Աստրենեթի որդի՝ արխազների թագավորին<sup>4</sup>: Նրանց միջև առաջացած անհամաձայնությունների պատճառը ներքին լարված փոխհարաբերություններն էին, որոնք շոշափում էին տարածքային խնդիրներ: Լիպարիտ Վախուշտի իշխանությունը Բարթիլի սահմաններում մտնում էր Նասրայի տիրույթների մեջ<sup>5</sup>: Բանն այն է, որ Լիպարիտը Գուարամին պատկանող Թռեղուի մատույցներում կառուցել էր Կղեկարանի ամրոցը: Սակայն դրանով չէին սահմանափակվում նրանց միջև ծառացած խնդիրները<sup>6</sup>: Գուարամի և Լիպարիտի միջև տարածքային խնդիրների շուրջ առաջացած հակասությունների ժամանակ Դավիթը, իրու գերակա, պեսոք է սատարեր Լիպարիտին: Դա հանգեցրեց Դավիթի և Գուարամի հարաբերությունների լարմանը: Ուստի, ստեղծված հրավիճակին միջանմտեց Աշոտ Բագրատունին: Վերջինս նոյնպես առաջնորդվում էր սեփական ռազմա-քաղաքական շահերով: Միջանմտելով Վիրուս տեղի ունեցող լիրադառնություններին՝ Աշոտ Բագրատունին մեկ անգամ ևս ապացուցում էր իր գերազանցությունը, ինչպես նաև հնարավորություն էր ստանում նրանց հողերը կցել իր տիրույթներին: Որպես ասվածի ապացույց հավելենք, որ Վրաստանում հաստատված Բագրատունիների կրտսեր Ծյուղի ներկայացուցիչ Նասրայի և Ջայաստանի Բագրատունիների տիրույթները սահմանակից էին: Ջենց սրանով էր պայմանավորված Աշոտ Բագրատունու և Նասրայի միջև առաջացած հակասությունները<sup>7</sup>: Ի վերջո, Վիրքի իշխանների միջև առաջացած հակասությունները հանգեցրեցին ռազմական բախման:

Դաշնակից ուժեղին հաջորվեց պարտության մատնել արխազներին և Նասրային՝ գրավելով Վերջինիս տիրույթները<sup>8</sup>: Այդուհանդեռձ, Նասրան կարողացավ փախչել և

<sup>1</sup> Պատասխանի թթոյն Փոտայ գրեալ Սահակայ Ջայոց վարդապետի հրամանաւ Աշոտայ իշխանաց իշխան Ջայոց, աշխատասիրութեամբ Ն. Ակինեանի, Ջանդէս ամսօրեայ, Վիեննա, 1968, թիւ 10-12, սյունակ 453-454:

<sup>2</sup> Կարլոս Շխօրեბա, ս. 142, Մարկուարտ Յ., Վրական Բագրատունեաց ծագումը, էջ 140, Ալբոնց Ն., Երկեր, էջ 504-505, Մկրտուն Ռ., Եշվ. աշխ., էջ 87-88:

<sup>3</sup> Խոռոլիա Ր., Политические взаимоотношения Абхазского царства и царства Армянских Багратидов, афтореферат диссертации на соискание ученой степени кандидат исторических наук, Е., 1967, с. 8.

<sup>4</sup> Կարլոս Շխօրեբա, ս. 142, հնմտ. Վրաց աղբյուրները Ջայաստանի և հայերի մասին, էջ 201, Ալբոնց Ն., Երկեր, հ. Ա, էջ 504:

<sup>5</sup> Կարլոս Շխօրեբա, ս. 169.

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Հազարամյակունու օշ., յարտցըզօլու յանու օւթորոս, Քաջնո մյուրց, տօնօլոս, 1965, զ. 101-102.

հաստատվել Բյուզանդիայում<sup>1</sup>: Զ. Անչաբաձեի հավաստմամբ Նասրան Բյուզանդիայում մնացել էր 7 տարի<sup>2</sup>: Վրացական աղբյուրում Վերջինիս մահը թվագրված է 888 թ.<sup>3</sup>: Դետևաբար նոր, Աշոտ Բագրատունու և դաշնակից ուժերի միջև ռազմական գործողությունները պետք է տեղի ունեցած լինեին 881 թ.:

Դայ-Վիրա-արխազական ռազմական գործողությունների արդյունքում Նասրայի տիրույթներն անցան դաշնակից ուժերին<sup>4</sup>: Չնայած ըստ որոշ հեղինակների՝ Զավախիքը, Արտահանը և Տաշիրը, 882 թ. Գուարամի մահվանից հետո անցել էին Դավիթ կուրապահատին<sup>5</sup>: Սակայն այս ենթադրությունը բնություն չի բռնում: Դավիթը 882 թ. առաջ սպանվել էր Նասրայի կողմից<sup>6</sup>: Դամաձայն մեկ այլ տեսակետի Նասրան, փախչելով Բյուզանդիա, իրեն օրինական ժառանգ էր թողել Դավիթի որդուն՝ Ալբրեդունիին<sup>7</sup>: Սակայն կասկածվի է<sup>8</sup> այն տեսակետը, համաձայն որի՝ Արտահանին ու Զավախիքին Նասրայից հետո տիրել էր Ալբրեդունիին<sup>9</sup>: Մնում է Ենթադրել, որ ամենայն հավանականությամբ Վերոգրյալ տարածքները պետք է անցած լինեին Աշոտ Բագրատունուն:

Սակայն, այսրանով ծավալված ռազմական գործողությունները չավարտվեցին: Դրանք նոր թափ ստացան 887-888 թթ.: Այս անգամ ևս հայրանակը հայերի և նրանց դաշնակից ուժերի կողմն էր:

**Չորրորդ Ենթագլխում «Թագավորության հռչակումը»**, քննության են առնված Դայոց թագավորության վերականգնման և Աշոտ Բագրատունու թագավոր հռչակվելու թվականի վերաբերյալ հայկական աղբյուրներում պահպանված Վկայությունները: Անդրադարձել ենք նաև մինչև այժ այդ առնչությամբ պատմագիտության հայտնի տեսակետներին: Ալբյուլագիտական քննության արդյունքում առավել արժանահակատ են հանարվել Հովհաննես Դրախանակերտոցու և Թովմա Արքունու հիշատակությունները, որոնցից օստվել են առավել ուշ շրջանի պատմիչները: Թովմա Արքունու հիշակություններում «...(Աշոտ Բագրատունին-Մ.4.) քաջավայելչագոյնս գրագաւորութեանն կատարելագործեալ զգամանակն, Ե ամ յիշխանական ճոխութեան, Ի ամ յիշխանաց իշխանական պետութեանն, Դ ամ ի թագակաա շրեղութեանն. և մեռաւ ՅԼթ թուականութեանն Զայոց, և ի ժ ամի հայրապետութեանն Գէրզեայ Զայոց կարողիկոսի»<sup>10</sup>: Եթե հիմնվենք հիշատակության Վերջին հատվածի վրա և Աշոտի մահը թվագրենք 890 թ., ապա ակնհայու կրտսնա, որ հիշատակության հաջորդ մասը, որը վերաբերում է Աշոտի՝ Գերոգ Գառնեցի կաթողիկոսի արոռակալման 15-րդ տարուն մահանալուն՝ հավաստի լինել չի կարող: Զայոց կարողիկոսի արոռակալման սկիզբը համարվում է 873 թ.<sup>11</sup>, այսինքն՝ 15-րդ տարին կլինի 888 թ.: Դետևապես, Աշոտի՝ 5 տարի իշխան, 25 տարի իշխանաց իշխան ու 4 տարի թագավոր լինելը և 890 թ. մահանալն առաջացնում է անհամաձայնություն: Ինչպես համոզվեցինք հայկական աղբյուրներից միայն Թովմա Արքունու աշխատությունում պահպանված թվական հիշատակությունը,

<sup>1</sup> Կարլիս Շխօրեბა, ս. 142,

<sup>2</sup> Այնաբազ Յ., Հիմնական հայությունների աղբյուրները և այլ աղբյուրները, ս. 125.

<sup>3</sup> Վախուց Տաշիրուն ս. 187-188.

<sup>4</sup> Կարլիս Շխօրեბա, ս. 142,

<sup>5</sup> Այնաբազ Յ., Հիմնական հայությունների աղբյուրները, ս. 82:

<sup>6</sup> Վախուց Տաշիրուն, ս. 187-188. Դամաձայն հայկական աղբյուրի՝ Դավիթին սպանել է Գուարամը տես Վարդան վարդապետ, էջ 82:

<sup>7</sup> Grousset R., Histoire de l'Arménie, p. 392, Երեմյան Ս., Լիպարիտ գորավարը և նրա նախորդները, էջ 110:

<sup>8</sup> Եղիազարյան Ա., Զայ-Բագրատունիների տերությունը, էջ 39:

<sup>9</sup> Երեմյան Ս., Հույն տեղում:

<sup>10</sup> Թովմա Արքունի և Անանուն, էջ 254:

<sup>11</sup> Հույն տեղում, էջ 474-475:

որից օգտվել էին մյուս հայ մատենագիրները, հավաստի չէ: Յայոց պետականության վերականգնման՝ քննության արժանի հաջորդ թվականը Վ. Յակոբյանի առաջ քաշած 884 թ. օգոստոսի 26-ն է՝ չորեքարիթ: Ենդինական իր տեսակետը հաստատելու համար վկայակոչում է Գրիգոր Մաշկոնի հիշատակարանը<sup>1</sup>: Սակայն հեղինակի ուշադրությունից չի վրիած մի կարևոր հանգամանք: Յայոց եկեղեցին, ի թիվս այլ եկեղեցիների, չորեքարիթին՝ իրեն Քրիստոսի մատմության օր, սուր հայտարարելով, արգելում է պատարազը: Վ. Յակոբյանը հավանական է համարում և ենթադրում, որ գուցե շարարվա օրերից չորեքարիթ օրվա հետ է կապված Յովհաննես Դրասխանակերտոցու այն վկայությունն, ըստ որի՝ Աշոտ Բագրատունուն «փոխանակ օճնան սրուակի հւղոյն»<sup>2</sup> պասկել են միայն կարողիկոսի օրինությամբ:

Յայոց պետականության վերականգնման և Աշոտ Բագրատունու թագավորման սկիզբը թվագրելով 884 թ. օգոստոսի 26-ով՝ Վ. Յակոբյանը չի բացառում նաև այդ հրադարձության՝ 885 թ. օգոստոսի 26-ով թվագրումը: Այս պարագայում չորեքարիթ օրվա փոխարեն կլիմի հինգարբիթ<sup>3</sup>: Սակայն գիտնականի ուշադրությունից վրիած է երկու կարևոր հանգամանք: Յովհաննես Դրասխանակերտոցին օժելու փոխարեն հիշատակում է «զինգու օրինութեանց գովութիւնս աստուածայինս կատարեալ», իսկ Գրիգոր Մաշկոնի հիշատակարանում ուղղակիորեն նշված է Աշոտին օժելու մասին. (Գեղրդ կարողիկոսու - Ս. Գ), օժեա զԱշոտ թագաւոր», ամենայստ անհամաձայնություն է ստացվում հիշատակարանի և պատմիչի վկայություններում:

Բացի այդ, այս հիշատակարանի գորության թվականի վերաբերյալ Ն. Մառը ցուցաբերել է որոշ տատանումներ՝ գրելով հետևյալը. «Այս հիշատակությունները գրված են հետազայում, հավանաբար 18-րդ կամ 19-րդ դարում և կազ չունեն 14-րդ դարում ընդօրինակված բուն ձեռագրի հետ: Ոչ զաղափար օրինակի, ո՞չ էլ ձեռագրի գրիչն է գրել այն...»<sup>4</sup>:

Ինչ վերաբերում է Վ. Յակոբյանի կողմից կարողիկոսի պասկը հոգևոր օրինությամբ կապելը չորեքարիթ օրով պայմանավորելը, կարծում ենք՝ այնքան էլ համոզիչ չէ: Ամեն պարագայում կարողիկոսի հոգևոր օրինությունը ևս, տեղի ունեցած պետք է լիներ եկեղեցական արարողությամբ՝ հետևապես չորեքարիթ լինել չեր կարող:

Կարծում ենք՝ դեպքերի ժամանակակից Յովհաննես Դրասխանակերտոցու կողմից Աշոտ Բագրատունուն մյուլունով չօժելու պարագան թագարար հիմք է տալիս պնդելու, որ Մաշկոնի հիշատակարանի վկայությունը հավաստի չէ:

Աշոտ Բագրատունու՝ Յայոց թագավոր հոչակվելու թվագրման վերաբերյալ միակ հավաստի աղյուլը կարող է լինել դեպքերին առավել մոտ կամգնած Յայոց կարողիկոս Յովհաննես Դրասխանակերտոցու հիշատակությունը, ըստ որի՝ Յայոց թագավորը խալիֆայությունից թագ էր ստացել «...ի ձեռն ոստիկանի Յիսէկ՝ որդուոյ Շեխսայ»:<sup>5</sup>

Յովհաննես Դրասխանակերտոցու հիշատակած Յիսէն համարժեք է արաբական Խսային, իսկ իրն մասնիկը ցույց է տալիս նրա՝ «Շեխս- ի (Շայխի- Ս.Գ.) որդի լինելը:

<sup>1</sup> Վ. Յակոբյանը այս կապակցությամբ գրում է «Սեր որոնումների ժամանակ Մատենադարանի ձեռագրի ավետարաններից մեկուն (N 3711), որը XIV դարի ընդօրինակություն է, մեզ հանդիպեց ձեռագրի հնագույն ընդօրինակության երեք հիշատակարան, ժամանակակից կողմից գրված, որոնք նոր լույս են սփռում քննության ենթակա հարցի վրա», Յակոբյան Վ., նշվ. աշխ., էջ 156:

<sup>2</sup> Յովհաննես Դրասխանակերտոցի, էջ 139:

<sup>3</sup> Յակոբյան Վ., նշվ. աշխ., էջ 157-158:

<sup>4</sup> Այս կապակցությամբ առավել մանրամասն տե՛ս Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակ, N 133, թոք. Ա, էջ 5, տե՛ս նաև Յայերեն ձեռագրերի հիշատակարան Ե-ԺԲ դարեր, ծնք. 1, էջ 39:

<sup>5</sup> Յովհաննես Դրասխանակերտոցի, էջ 138-139:

Թեև Ն. Աղոնցը պատմիչի հիշատակությունը սրբագրում է՝ նշելով, որ թագարերը ոչք Յիսեն է այլ նրա որդին<sup>1</sup>, այդուհանդեռձ, Ա. Տեր-Ղևոնյանի հավաստմար վերջինս իսա իրն ալ-Շայխ ալ-Շայքանին է, որը Աշոտ Բագրատունուն թագ և արքայական նշանակներ էր բերել<sup>2</sup>: Չնայած սրան՝ Յ. Նալբանդյանն այդ դերուն տեսնում է Իսակ իրն Կունդաշիկին<sup>3</sup> (Քունդաշիկին-Մ.Գ.): Ինչպես վերը նշվեց, Յովիհաննես Դրասխանակերտոցին հենց նրան է մատնանշում իրեւ Աշոտին թագ և արքայական իշխանությունը խորհրդանշող նշանակներ բերող: Ակնհայտ է, որ Իսակը սերում է Քունդաշիկից և Շայխի հետ որևէ կապ ունենալ չէր կարող: «Շեխ» (Շայխ-Մ.Գ.) եզրույթը կարելի է ընկալել իրեւ կառավարիչ, նահանգապետ, այսինքն՝ պաշտոնյա ինաստով: Սակայն, Յովիհաննես Դրասխանակերտոցը աշխատությունում այն գրված է իրու անձնանուն, հետևապես այն պաշտոնը:

Թեպես Յ. Նալբանդյանն Աշոտ Բագրատունու թագարերի դերում մատնանշում է Իսակ իրն Քունդաշիկին, այդուհանդեռձ, ակնհայտ է, որ այս առնչությամբ ցուցաբերել է որոշ տատանումներ:

Նրա հավաստման հայկական աղբյուրներն Աշոտ Բագրատունու թագարդման վերաբերյալ հաղորդում են Յայոց ՅԼԴ թ. այսինքն՝ 886 կամ 887 թ.: Յակառակ սրան՝ արաբական աղբյուրները՝ «իրն Խալդունը, Յիջրի 268 թ.(մ. թ. 881-882), Յիջրի 269 թ. (մ. թ. 882-883) իրն էլ Աթիր (է, էջ 159) և Յիջրի 270 թ. (մ. թ. 883-884) Տաղորիբերդին (Գ 46)<sup>4</sup> Խասին համարում են մահացած:

Եթե Յ. Նալբանդյանն իրապես համոզված լիներ, որ Յայոց թագավորի թագարերն Իսակ իրն Քունդաշիկն է, չէր մտահոգվի հայկական աղբյուրում Աշոտի թագարդման և արաբական աղբյուրներում Խասի մահկան վերաբերյալ համուխող հակասական հիշատակություններով: Ակնհայտ է, որ նա Աշոտի թագարդությունը կապում է Խասի հետ, սակայն Վերջինիս մահվան թվականի և Աշոտի թագարդման վերաբերյալ հայկական և արաբական աղբյուրների վկայություններն առաջացնում են անհամարժեաթյուն: Յեղինակն ակնհայտ անհամաձայնությունների հանդիպելով՝ այդպես էլ Վերջնական լուծում չի տալիս հարցին<sup>5</sup>:

Յովիհաննես Դրասխանակերտոցին, ինչպես նշեցինք, Խասին հիշատակում է իրու ոստիկան՝ կառավարիչ: Առաջին հայացից կարելի է Խասի կառավարչության տարիներով թվագրել Աշոտ Բագրատունու թագարդումը: Սակայն, հայկական աղբյուրներն Արմինհայի կառավարիչների պատունավարության տարիների վերաբերյալ հստակ թվական վկայություններ չեն հաղորդում: Ինչ վերաբերում է արաբական աղբյուրներին, ասաւ դրանցում պահպանված հիշատակությունները հակասական են: Խասի պարագայում Յակուլիին նրա՝ Արմինհայի, Դիար Բարի և Ալոպատականի կառավարչությունը թվագրում է 870 կամ 871 թք.: Առավել հստակ ըստ պատմիչի վկայությունների՝ ([Խաս իրն ալ-Շայխը] այդ երկիրը (պատմիչը նկատի է ունեցել Յայսատանը-Մ.Գ.) դուրս եկավ 257-ի Զումարա Բ ամսին (26 ապրիլ-24 մայիս 871)... )<sup>6</sup>: Թարարին հիջրի 256 թ.՝ (869-870) իրն ալ-Ասիրը՝ հիջրի 256 թ. (9 դեկտեմբեր 869-28 նոյեմբեր 870)<sup>2</sup>, Աբուլ-Ֆիդայ՝ 870 թ.<sup>3</sup>:

<sup>1</sup> Աղոնց Ն., Երկեր, հ. Ա, էջ 472:

<sup>2</sup> Տեր-Ղևոնյան Ա., Արմինհայի ոստիկանների ժամանակագրությունը, Յովիհանների ժողովածու, էջ 128:

<sup>3</sup> Նալբանդյան Յ., Արաբացի ոստիկանները Յայսատանում, ՅՍՍՍ Գիտ. ակադ. «Տեղեկագիր» հաս. գիտ., Ե., 1956, N 8, էջ 123-124:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 124:

<sup>5</sup> Յ. Նալբանդյանին, վերահս մահկան պատճառով, չհաջողվեց սույն հոդվածը ավարտին հասցնել:

<sup>6</sup> Յակուլի, Արար մատենագիրներ թ-ժ դարեր, էջ 398-399:

Զնայած սրան, Յ. Մարկվարտը հակված է Խսային այդ պաշտոնում տեսմել 870-875 թթ. միջակայքում<sup>4</sup>:

Արաբական աղբյուներում պահանճառ վկայությունները մեզ թույլ են տալիս համերաշխել Խսայի՝ Արմինիայի առաջին կառավարչության՝ 870-871 թթ.<sup>5</sup>, իետ:

Նրա պաշտոնավարության այս շրջանի տևողության վերաբերյալ Ո. Ֆասմերը գրում է. «Որչափ ժամանակ այս Խսան Հայաստանի ոստիկան եղավ չենք գիտեր»<sup>6</sup>:

Խսայից հետո արաբական աղբյուրը հիջրի 261 թ. (874-875) Եգիպտոսի, Ասորիքի, Մոսուլի, Արմինիայի և Խորասանի կառավարչի պաշտոնում հիշատակում է Զաֆար ալ-Մութավավիդին<sup>7</sup>: Վերջինիս կառավարչության բազմանը համերաշխում են Ո. Ֆասմերը, Յ. Նալբանդյանը և Ա. Տեր-Ղևոնյանը<sup>8</sup>: Հայաստանի հաջորդ կառավարչը՝ Մուհամմադ իբր Խալիլը էր, նա այդ պաշտոնը երկրորդ անգամ զբաղեցրել է 878 թ.<sup>9</sup>: Արաբական աղբյուրը հիջրի 266 թ. (879-880) Հայաստանի, Մոսուլի, Դիարիխայի կառավարչի պաշտոնում հիշատակում է Խսակ իբր Քունաշիկին<sup>10</sup>:

Խսայից հետո 871-874 թթ. ընկած ժամանակահատվածում Խնարավոր չէ ստույգ որոշել Արմինիայի կառավարչին կամ կառավարչին Այդ պաշտոնը 874-875 թթ. վարել է Զաֆար ալ-Մութավավիդը, 878 թ.՝ Մուհամմադ իբր Խալիլը, իսկ 879-880 թթ. Խսակ իբր Քունաշիկը: Զնայած սրան, առանձնակի ուշադրության է արժանի գիտական գրականության մեջ հանդիպող «Իրասիհա» (881) - հիշվում է դրամի վրա. Արմինիա 268 (881-882)<sup>11</sup> արտահայտությունը: Սակայն Ա. Տեր-Ղևոնյանն իրավացիորեն գերծ է մնում Վերջինիս որևէ պաշտոն Վերաբերելուց: Հայտնի իրողություն է, որ արաբական դրամների վրա կարող էին լինել Խալիֆաների, թագաժառանգների, տվյալ տարածաշրջանի կառավարիչների կամ պարզապես ժամանակի ազդեցիկ որևէ պաշտոնյայի անուն: Այդպիսի հեղինակությամբ օժտված էր եղել նաև Իրրահիմը: Վերջինս գուցե նույն վրացական աղբյուրում հիշատակված Աբրահամն էր, որն Խսային փոխարինել էր 870-878 թթ. միջակայքում<sup>12</sup>:

<sup>1</sup>أبي جعفر محمد بن جرير الطبرى, تاريخ الرسل والملوك لابى جعفر محمد بن جرير التبرى (223-310), الجزء التاسع, القاهرة، ص. 475، 1975.

<sup>2</sup> Իբր ալ-Ասիր, էջ 164:

<sup>3</sup> Արուլ-Փիդա, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 213 տես նաև ծնթ. 7, էջ 252:

<sup>4</sup> Marquart J., Eranšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'I, Berlin, Mit historisch-kritischem Kommentar und historischen und topographischen Excursen, Berlin, 1901, S. 109.

<sup>5</sup> Ֆասմեր Ո., ժամանակագրությունն Հայաստանի ոստիկաններու առաջին Արքատեանց օրով, Աս-Սաֆֆախիւն մինչեւ Աշոտ Ա. ի թագալորելը 750-887, թարգմանեց դկտ. Յ. Կահան Վ. Ինգլիշեան, Վիեննա, 1933, էջ 98, Նալբանդյան Յ., Արաբացի ոստիկանները Հայաստանում, էջ 123, Տեր-Ղևոնյան Ա., Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, էջ 396, Encyclopédie de L'Islam, nouvelle édition, par E. Van Donzel, B. Lewis et Ch. Pellat t. IV Leiden, E. J. Brill- Paris, 1978, էջ 93 (այսուհետև՝ Encyclopédie de L'Islam).

<sup>6</sup> Ֆասմեր Ո., Ծալ., աշխ., էջ 99:

<sup>7</sup> Իբր ալ-Ասիր էջ 166:

<sup>8</sup> Ֆասմեր Ո., Ծալ., աշխ., էջ 99-100, Նալբանդյան Յ., Արաբացի ոստիկանները Հայաստանում, էջ 123, Տեր-Ղևոնյան Ա., Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, էջ 396:

<sup>9</sup> Նալբանդյան Յ., նույն տեղում, Տեր-Ղևոնյան Ա., նույն տեղում:

<sup>10</sup> Ալ-Ջաման, Ա. Ալ-Բայթ, էջ 553: Խսակ իբր Քունաշիկի կառավարչության վերաբերյալ տես նաև Ֆասմեր Ո., Ծալ. աշխ., էջ 100, Նալբանդյան Յ., Ծալ. աշխ., էջ 123-124, Տեր-Ղևոնյան Ա., նույն տեղում:

<sup>11</sup> Տեր-Ղևոնյան Ա., նույն տեղում:

<sup>12</sup> Կարլոս Չխօբրեա, ս. 142, պրմ., 64, ս. 168.

Այսպիսով, հսան 874-875, 878 և 879-880 թթ. Արմինիայի կառավարչի պաշտոնը չէր կարող զբաղեցնել: Սակայն հայտնի է, որ հիջրի 266 թ. (879-880) նա դեռևս Ամիդում էր<sup>1</sup>, իսկ հիջրի 267թ. (880-881) մասնակցում էր Միջագետքում ծագած խորվություններին<sup>2</sup>: Ամենայն հավանականությամբ, հենց այս ժամանակ էլ հսան վերստին դարձնում է Արմինիայի կառավարիչ: Այստեղ հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ Ո. Ֆասմերը, Վկայակոչելով արաբական աղբյուրը, հսակ իրն քունդաջիկին հիջրի 269 թ. (882-883) Արմինիայի, Մոսուլի, Դիար-Ռաֆիայի կառավարչի փոխարքն կոչում է Մոսուլի և Զագիրայի կառավարիչ<sup>3</sup>: Պարզելու համար, թե ով է եղել Արմինիայի կառավարիչը 881-883 թթ., մեզ օգնում է իրն ալ-Ասիրը: Ուշադրության է արժանի նրա այն վկայությունն, ըստ որի հսան մինչև իր մահը եղել է Արմինիայի կառավարիչ<sup>4</sup>: Ի դեպ Ա. Տեր-Ղևոնյանը ևս հսակ իրն քունդաջիկից հետո, թեև նշում է, («Իրրահիմ» (881) - Հիշում է դրամի վրա. Արմինիա 268 (881-882)» կապակցությունն, այդուհանդերձ, ինչպես վերը նշեցին, զերծ է մնում իբրահիմին որևէ պաշտոն վերագրելուց, և վերստին նշում է հսային՝ նրան վերագրելով Աշոտ Բագրատունուն խալիֆայից թագ բերելը<sup>5</sup>:

Փաստերի համադիր քննությունը թույլ է տալիս Աշոտ Բագրատունուն հսա իրն ալ-Ճայիսի կողմից թագ բերելու թվագրումը պարզել հսայի մահվան ճշգրտմանը:

Այս առնչությամբ Յ. Նալբանդյանը, ինչպես վերը նշեցինք, մատունանշում էր. «իրն Խալիլունը, Հիջրի 268 թ. (մ.թ. 881-882), Հիջրի 269 թ. (մ.թ. 882-883) իրն էլ Ասիր (էջ 159) և Հիջրի 270 թ. (մ.թ. 883-884) Տաղրիբերոյին (Գ 46)» արաբական աղբյուրներում պահպանված վկայությունները: Եթե իրն Խալիլունի<sup>6</sup> և իրն ալ-Ասիրի<sup>7</sup> պարագայում իրապատում է Յ. Նալբանդյանի մեջբերումները, ապա Տաղրիբերոյին արված հղումը չի փաստվում և Յ. Նալբանդյանի մեջբերումները պահպատճենում կառավարչի մահը թվագրվում է հիջրի 269 թ.<sup>8</sup> (882-883):

Այսպիսով, արաբական աղբյուրներն հսայի մահը թվագրում են հիջրի 268-269 թթ. (881-883) միջակայքում<sup>9</sup>: Ուստի, տրամարանական է կարծել, որ հսայի կողմից Աշոտ Բագրատունուն թագ և արքայական իշխանությունը խորհրդանշող նշանակներ բերելը տեղի ունեցած պետք է լիներ մինչև նրա մահի՝ 881-883 թթ. միջակայքում:

**Եզրակացություններում** անփոփոխ են կատարված աշխատություններ կառավարչի արդյունքները: Դրանք անփոփ կերպով կարելի ներկայացնել այսպես.

1. Բագրատունի իշխանական տունն ունի հայկական ծագում:

2. Բագրատունի իշխանական տան ներկայացուցիչները մշտապես ներգրավված են եղել Հայաստանի ներքաղաքական կյանքի տարրեր բնագավառներում: Սակայն, նրանց գործունեությունը, քաղաքական հանգամանքների թելադրանքով, հաճախ Հայաստանի սահմաններից դուրս էր գալիս՝ ներառելով հարևան պետությունները: Բագրատունիները դեռևս թ.ա. II դ. հիշատակվում են իբրև քաղաքիրներ, IV դ.՝ ասպետներ, իսկ V դ. սկսած՝ մարզպաններ: Նրանց աստիճանական հզորացումն ավելի նկատելի դարձավ VI դ., երբ իշխանական տան անդամները հանդս եկան որպես հակապարսկական և հակաբյուզանդական ապստամբությունների կազմակերպիչներ:

<sup>1</sup> Իրն ալ-Ասիր, էջ 168:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 169:

<sup>3</sup> Տես Ֆասմեր Ո., նշվ. աշխ., էջ 100:

<sup>4</sup> Իրն ալ-Ասիր, էջ 169:

<sup>5</sup> Տեր-Ղևոնյան Ա., նույն տեղում:

<sup>6</sup> عبد الرحمن بن خلدون، تاريخ ابن خلدون، الجزء الثالث، بيروت، 2000، ص. 429.

<sup>7</sup> Իրն ալ-Ասիր, նույն տեղում:

<sup>8</sup> بن تغري بردي الأتاكبي، النجوم الظاهرة في ملوك مصر والقاهرة، الجزء الثالث، بيروت، 1992، ص. 58.

<sup>9</sup> Կայլամի հանրագիտարանում ևս հսայի մահը թվագրված է հիջրի 269-ով: Տես Encyclopédie de l'Islam, p. 94:

Բագրատունիներն արդեն քաղաքական լուրջ ուժ էին ներկայացնում՝ զբաղեցնելով Հայոց իշխանի պաշտոնը: Բագրատունիների ազդեցությունը նկատելի էր նաև Հայոց հոգևոր-Եկեղեցական կյանքում, մասնավորապես հայ և հունադավան Եկեղեցիների փոխարաբերություններում, որոնք լայնորեն առնչվում էին Կողմների քաղաքական շահերին:

3. Արաբական տիրապետության շրջանում Հայաստան իր աշխարհագրական դիրքի շնորհիվ ռազմավարական մեծ կարևորություն էր ձեռք բերել տարածաշրջանում՝ ակտիվորեն ներգրավվելով Խալիֆայություն-Կայսրություն փոխարաբերություններում:

Թեպետ Հայաստանը գտնվում էր Խալիֆայության գերիշխանության ներքո, այդուհանդերձ, արաբների համար չափազանց կարևոր էր այս ճշտապես ուշադրության կենտրոնում պահելու: Խալիֆայության քաղաքականության կարևորագույն խնդիրներից էր ցանկացած միջոցով՝ նույնիսկ որոշակի գիտումներ կատարելով, հայ իշխանների բյուզանդամետ տրամադրությունների կանխումը: Բյուզանդիան և իր հերթին հայլիքայությունից կտրելու պատրովակով հաճախ համեստ էր գալիս նրանց շահագրգռելու՝ դեպի Բյուզանդիա կողմնորոշելու միտումով: Հայաստանը գերազանց հրավունքներ ուներ հարևան քրիստոնյա Երկրների՝ Վիրքի և Աղվանիք նկատմամբ: Վերոհիշյալ Երկրները ներառվել էին Բագրատունի հայոց իշխանների ազդեցության գոտում:

4. VIII-IX դդ. հայ ժողովրդի համար նշանակալից էին Խալիֆայության դեմ բարձրացված ապստամբություններով: Թեպետ, հաճախ դրանց կազմակեպիչները Մամիկոնյան իշխանական տան ներկայացնուցիչներն էին, ովքեր ի տարրերություն Բագրատունիների, հավաքած էին Խալիֆայության հետ առավել կյած քաղաքականություն Վարելուն: Բագրատունիներն առավել հեռավոր՝ Հայոց քագավորությունը վերականգնելու միտումներ ունենալով, փորձում էին նախ և առաջ արաբների հետ առաջացած հակասությունները հարթել խաղաղ ճանապարհով: Այդ էր պատճառը, որ Բագրատունիները, իրեն ապստամբությունների կազմակերպիչներ, իրենց տեղը գիծցին Մամիկոնյաններին: Սակայն Բագրատունիների դիվանագիտությունը, ճկուն, հեռատես, խոհեմ ձեռնարկումները հարկ եղած դեպքում քաղաքական դեպքերի թելադրանքով շատ արագ վերածվում էին հակաարաբական ապստամբության:

5. Արմինիայի կառավարչությունում հայ իշխանների, հոգևորականների և առհասարակ բնակչության վիճակը պայմանավորված էր Խալիֆայության արտաքին և ներքին դրությամբ: Արմինիայի ստեղծումից սկսած արաբները վարում էին ապստամբ հայ նախարարներին ոչնչացնելու և նրանց հողային տիրույթները զավթելու քաղաքականություն: Հայ ապատանուն ոչնչացնելու արաբների նպատակամնվկած քաղաքականությունն ի վերջո ձախողվեց: Խալիֆայությունը հարկադրված էր որոշ գիտումներ կատարել հօգուտ հոգևորականության և հայ իշխանների: Այսպիսով, մինչև 750-752 թթ. նրանց հաջողվեց պահպանել մասնակի ինքնավարություն, որը 802 թ. սկսած առավել ամրապնդվեց: Կարևոր իրողություն էր IX դ. սկզբին՝ ներքին ինքնավարության ժամանակ, Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը՝ Բագրատունի իշխանական տան անդամների ժառանգական մենաշնորհ դարնալը: Հայոց իշխանի լիազորություններին զուգահեռ, աճում էր նաև հայ ավագանու դերն ու նշանակությունը:

6. Թեև 862 թ. հրավիրված Շիրակավանի Եկեղեցական ժողովն առնչվում էր հայ և հունադավան Եկեղեցական փոխարաբերություններին՝ մասնավորապես Եկեղեցիների միության վերաբերյալ էր, այդուհանդերձ, այն ուներ ծանրակշիռ քաղաքական նշանակություն:

7. Հայկական աղբյուրներում Բագրատունյաց քագավորության վերականգնման և Աշոտ Ա Բագրատունու թագադրման բվագրման վերաբերյալ առկա աղբյուրագիտական վկայությունների ամհամաձայնությունը թույլ է տալիս առավել արժանահավատ համարել Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունը: Ուստի, Հովհաննես

Դրասիսանակերտցու վկայությունը և արաբական ու վրացական աղբյուրների համադիր քննությունը հիմք է տպալս կարծելու, որ Յայոց թագավորության վերականգնումը, Խալիֆայությունից Աշոտ Բագրատունուն խս իրն ալ-Շայխի միջոցով թագ ուղարկելը, և Աշոտ Բագրատունու թագադրությունը տեղի է ունեցել 881-883 թթ. միջակայքում:

**Աստենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Գրիգորյան Մ., Բագրատունիների ծագման հարցի շուրջ, ՊԲՀ, 2010, թիվ 2, էջ 116-129:
2. Գրիգորյան Մ., IX դարասկզբի Արշարունիքի տերերի հարցի շուրջ, ԲԵՀ, 2011, թիվ 1.(135) էջ 26-32:
3. Գրիգորյան Մ., Շիրակավանի 862 թ. Եկեղեցական ժողովը, Յայոց պատմության հիմնահարցեր (գիտական հոդվածների ժողովածու), 2011, թիվ 12, էջ 47-63:
4. Գրիգորյան Մ., Բագրատունյաց թագավորության սկզբնավորման թվագրության շուրջ, ԼՀԳ, 2012, թիվ 2-3, էջ 114-125:

ГРИГОРЯН МАРИАМ ГНЕЛЕВНА

## БАГРАТИДЫ И ВОССТАНОВЛЕНИЕ АРМЯНСКОГО ЦАРСТВА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 29-ого марта 2013 года в 14<sup>00</sup>, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

### РЕЗЮМЕ

Исследование посвящено изучению истории восстановления Армянского царства во главе с Багратидами. Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованных источников и литературы.

Во введении обоснованы актуальность, цель и задачи, представлена научная новизна диссертации, обоснованы временные рамки, дан обзор источников и литературы.

Первая глава – “Багратиды до арабского периода”- посвящена исследованию происхождения княжеского рода Багратидов, а также важной роли Багратидов в политической истории древней и раннесредневековой Армении, включая всестороннее управление государством.

Во второй главе – “Административно-хозяйственное и политическое положение Армении (VIII в. – первая четверть IX в.)” представлено политическое положение страны в период утверждения Арабского владычества, в рамках административно-политической единицы-Армина, расширение прав армянского князя при правительстве Армины, признание Халифатом наследственного земельного права армянской церкви, нахараров, положительные сдвиги в налоговой политике по отношению к армянам. Багратиды, имея дальновидные планы для восстановления армянской государственности, пытались отношения с Халифатом регулировать мирным путем.

Несмотря на это, они в соответствии с требованиями политической ситуации, постоянно держали в центре своего внимания антиарабские восстания армян VIII в., внутренние изменения в армянских княжеских родах, возникшие после восстаний 774-775 гг. В результате этого, стало заметным усиление членов княжеского рода Багратидов.

В этой главе дано также подробное исследование политической деятельности Ашота Мсакера (802-826) и Багарат Багратида (826-851).

Заметное превосходство, достигнутое Багратидами в Армении, при Ашоте Мсакере еще более укрепилось. Ашот Мсакер и его брат спарапет Шапух Багратид добились расширения владений Багратидов.

Багарат Багратид, сменивший Ашота Мсакера носил титул ишханац ишхана и куропалата, имея несомненно более широкие полномочия по сравнению со своим предшественником. В своей внутренней политике он считал первостепенной задачей объединение Багратидов, а во внешней-сотрудничество с Византийской империей для предотвращения арабской угрозы. Заметные успехи Багарата Багратида в этом направлении были прерваны в 851 г.

Прибывшему в Армению правителью Армины Юсуфу ал-Маруази (850-851) удалось захватить его.

В третьей главе – “Армения в период Ашота Багратида. Провозглашение Багратидского царства” – представлены действия Ашота Багратида, направленные на восстановление Армянского царства, Церковного собора в Шираакаване в 862 г. непосредственно связанное с ним письмо Константинопольского патриарха Пота, направленное Католикосу армян Закарию I, армяно-грузино-абхазские отношения, дата провозглашения Армянского царства и ряд других вопросов.

Объединяющая деятельность, направленная на восстановление Армянского царства, получила новый импульс в период правления Ашота Багратида. Получив от Халифата в 855 г. титул армянского князя и спарапета, а в 862 г. должность армянского князя-князей, он имел явное превосходство над армянскими княжескими родами. Кроме армянских князей, налоговые и военные обязательства перед этим несли и арабские эмиры, утвердившиеся в Армении.

Росту политической роли Багратидов заметно способствовало взаимодействие между представителями княжеских родов.

Достойны внимания также заметные развития армяно-византийских церковных отношений, которые в действительности вырастали в политические интересы. В письме константинопольского патриарха Пота армянскому Католикосу Закарию 1-ому выражалась политическая линия греческой православной церкви. Присоединение армянской церкви к греческой, наконец то, привело бы к захвату Армении. Шираакаванский церковный собор 862 г., который был создан для обсуждения вышеупомянутого письма, отверг предложение патриарха. Армянский католикос полностью отрицал возможность объединение церквей.

Следующей задачей исследования является анализ явного расширения политического влияния Ашота Багратида. В результате, между ним и абхазским царем Георгием 1-ым (861-868) из-за Грузии возникло военное противостояние. В армяно-абхазско-грузинской войне победила политическая группировка Ашота Багратида.

Из данных, указанных в армянских источниках, о датировке коронования Ашота 1-го Багратида, более достоверным считается упоминание Ованнеса Драсханакертского. Сопоставление армянских, арабских и грузинских источников дает основание считать, что восстановление армянского царства и коронация Ашота Багратида посредством Иса ибн ал-Шайх ал-Шайбани произошло в период 881-883.

В заключении изложены основные итоги и выводы исследования.

## THE BAGRATIDS AND THE RE-ESTABLISHMENT OF ARMENIAN KINGDOM

Dissertation for the degree of Candidate of Sciences on the specialization of "Armenian History" 07.00.01

The defense will be held on the 29<sup>th</sup> of March, 2013, 14<sup>00</sup>, at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC of RA, operating at the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

### SUMMARY

The present study deals with the problem of re-establishment of Armenian kingdom under the rule of an Armenian princely house, the Bagratids.

The work consists of an introduction, three chapters, conclusions, a list of literature and sources used.

The actuality, objectives and scientific novelty of the dissertation are presented in the introduction. Besides, the chronological framework of the study is interpreted and the review of sources and literature are highlighted.

The first chapter - "The Bagratids in the Pre-Arabic Period" - examines the issues concerning the genealogy of the Bagratid princely house as well as the significant role the Bagratids played in every aspect of the public administration system of Armenia during the ancient and early medieval times. The outputs of the source investigation and the exhaustive studies on the Bagratids' genealogy allow us to claim that the above mentioned noble house is exclusively of Armenian descent. Armenian historiographer Movses Khorenatsi ascribed to the Bagratids "Jewish" origin, which could have been determined by the principle of the historiographer both to describe the said Armenian dynasty as one of the Biblical Nations and to deem nationality through the prism of belief, a peculiar reflection of proselytism, which, in turn, was a typical phenomenon in the Middle Ages.

In the second chapter - "The Political and Administrative-Economic State of Arminia (from the 8<sup>th</sup> century to the first quarter of the 9<sup>th</sup> century)" - are summarized the establishment of Arab rule in Armenia, expansion of Armenian Prince's jurisdiction alongside to the manager of Arminia, recognizing by the Caliphate the hereditary of landowning of Armenian church and ministers, shifts in favor of Armenians of the tax policy. Having far-going intentions of recovering Armenian statehood Bagratunis, tried to smooth relations with the Caliphate peacefully. Despite this, according to the demands of political events they were constantly focused on antiarabic rebellions started in the 8<sup>th</sup> century and internal shifts in Armenian princely houses after 774-775 revolt. As a result of those, the strengthening of members of princely house Bagratuni became noticeable. The present chapter is a detailed and thorough study of Ashot Msaker's and Bagarat Bagratuni's political activity. The obvious superiority acquired by Bagratunis was put on a strong foundation in

Ashot Msaker's years in power. Ashot Msaker and his brother sparapet Shapuh Bagratuni had started enlargement of the Bagratunis' domains. Bagarat Bagratuni who replaced Ashot Msaker having titles of prince of princes and kurapaghats obviously had more powers than his predecessor. He gave priority to unification of Bagratunis in domestic policy, and cooperation with the Byzantine Empire in foreign policy, to prevent Arab's threats. The apparent success of Bagarat Bagratuni in this direction suspended in 851. Manager of Arminia Yusuf al-Maruazi (850-851) succeeded in arresting him.

The third chapter - "Armenia in the Period of Government of Ashot Bagratuni. The Proclamation of the Bagratunis' Kingdom" - presents Ashot Bagratuni's consolidating activities undertaken to restore Armenian kingdom, the Church Council of Shirakavan and, having connection with it, the letter of Pot-the Patriarch of Constantinople, to Armenian Catholicos Zakaria A, the examination of armeno-vira-abkhaz relations, dating of proclamation Armenian Kingdom, and a number of other problems. The consolidating action undertaken for recovering of Armenian kingdom takes new momentum in Ashot Bagratuni's years in power. Receiving positions of Armenian Prince and Sparapet in 855, and position of Prince of princes in 862 from Caliphate, he acquired obvious superiority than the other Armenian princely houses. Apart from Armenian princes, also Arabic amirates established in Armenia, had tax and military inferiority obligations towards them. Cooperation between the representatives of the princely house promote the growth of the Bagratunis' political role. The developments which were viewed between the relations of Armeno-Byzantine churches having affected the political interests were also remarkable. The Patriarch of Constantinople Pote in his letter addressed to Armenian Catholicos Zakaria openly expresses the political policy of the Greek church. Combining of the Armenian church to a Greek church would eventually lead to a forcible connection of Armenia. The Church Assembly of Shirakavan in 862, which convened on the purpose of the investigation of above mentioned letter, rejected the proposal of Patriarch. Catholicos of the Armenian demonstrated an apparent negative attitude relating to the combining of churches.

The examination of problem of obvious expansion of Ashot Bagratuni's political influence is the next subject of the review. As a result, a military conflict broke out between him and King George of Abkhazes for Virk. Ashot Bagratuni's political grouping won in armeno-vira-abkhaz war. The evidence, existing in Armenian sources are related to the recovery of Bagratunis' Kingdom and dating of coronation of Ashot Bagratuni, allows to consider more accurate dating of Hovhannes Draskhanakertsi's mention.

The mapped investigation of Armenian, Georgian and Arabic sources gives a reason to believe that the restoration of Armenian kingdom, and sending the crown to Ashot Bagratuni from the Caliphate through Isa-ibn-al-Shaikh al-Shaybani and Ashot Bagratununi's coronation occurred in the range from 881 to 883.

The main results of the thesis are summarized in conclusions.

